Հատուկ կրթության ծառայությունների ուղեցույց՝ նախատեսված ծնողների համար

(Ներառյալ ընթացակարգային իրավունքները և երաշխիքները)

Լոս Անջելեսի միավորված դպրոցական շրջան

Վերանայված՝ 2018թ. Սեպտեմբերին

Առաջին տպագրությունը՝ 2000թ.
Հեղինակային իրավունքը © 2018, 2016, 2014, 2009, 2007, 2006, 2005, 2000թթ. պատկանում է Լոս Անջելեսի Միավորված Դպրոցական Համայնքին
Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս հրապարակման ոչ մի հատված չի կարող որևէ գործընթացով կամ տեխնիկայով պատճենվել՝ առանց Լոս Անջելեսի Միավորված Դպրոցական Համայնքի հատուկ կրթության բաժնի կառավարչի տեղակալի նախապես տրված գրավոր համաձայնության: Այս հրապարակումը իրավական խորհրդատվություն չի պարունակում և այն փոխարինող փաստաթուղթ չի համարվում՝ ծրագրից անկախ խորհուրդ ստանալու համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի միավորված դպրոցական շրջանի ուսուցիչները, վարչական աշխատակիցները և անձնակազմը հավատում են բոլոր աշակերտների հավասար կարևորությանը և արժանապատվությանը և պարտավորություն են ստանձնել բոլոր աշակերտներին իրենց առավելագույն ներուժի սահմաններում կրթելու համար: Մեր առաքելությունն է առավելագույնս մեծացնել ներառական միջավայրում անցկացվող ուսուցումը բոլոր աշակերտների համար, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ իր ներդրումն ունենա՝ ի շահի մեր բազմազան հասարակության:

Այս ուղեցույցը Ձեզ անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում՝ հասկանալու հատուկ կրթության գործընթացը: Այն բացատրում է Ձեր իրավունքները, Ձեր երեխայի իրավունքները, և այն, թե ինչպես պետք է դրանք կիրառել «Հաշմանդամ անձանց կրթության դաշնային օրենքի» և Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի ներքո:

Ուղեցույցը նաև Ձեզ համար ծառայում է որպես ընթացակարգային երաշխիքների ծանուցում, որը պետք է Ձեզ տրամադրվի՝ դաշնային և նահանգային օրենքների համաձայն: Դուք ուսումնական տարվա ընթացքում մեկ կրկնօրինակ կստանաք և

- Երբ Ձեր երեխան առաջին անգամ ուղղորդվի հատուկ կրթության գնահատման կամ երբ Դուք առաջին անգամ գնահատում խնդրեք:
- Երբ Դուք առաջին անգամ նահանգային գանգատ ներկայացնեք, միայն միջնորդություն խնդրեք կամ ուսումնական տարվա ընթացքում պատշաճ իրավական ընթացակարգ պահանջեք:
- Երբ որ որոշում կայացվի կարգապահական գործողություն կատարել, որը բաղկացած կլինի տեղադրման փոփոխությունից:
- Երբ Դուք չեղարկեք Ձեր երեխայի համար նախատեսված հատուկ կրթության շարունակության և դրան առնչվող ծառայությունների տրամադրումը:
- Երբ կրկնօրինակ խնդրեք:

Խնդրում ենք անդրադառնալ Բովանդակության ցանկին՝ գտնելու Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությունը: Մենք հույս ունենք, որ այս ուղեցույցը կօգնի Ձեզ աշխատել Ձեր դպրոցի և համայնքի հետ՝ Ձեր երեխային ամենահարմար կրթությունը տրամադրելու համար:

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե այս ուղեցույցը կարդալուց հետո հատուկ կրթության վերաբերյալ հավելյալ տեղեկությունների կարիք ունենաք կամ հավելյալ հարցեր ունենաք Ձեր երեխայի կրթության վերաբերյալ, Դուք կարող եք դիմել Ձեր երեխայի ուսուցչին, դպրոցի տնօրենին և/կամ Ձեր տեղական տարածքի հատուկ կրթության վարչական աշխատակցին՝ աջակցություն ստանալու համար: Կոնտակտային տվյալները նշված են հետևի կազմի վրա: Բացի այդ, Դուք կարող եք զանգահարել՝

Դպրոց և ընտանիքի աջակցության ծառայություններին՝ (SFSS) (213) 241-6701 հեռախոսահամարով

Հատուկ կրթության բաժնի դպրոցի և ընտանիքի աջակցության ծառայությունների (SFSS) բաժինը կառավարում է հեռախոսակապի կենտրոնի և գանգատների պատասխանի բաժինը: SFSS-ն աշխատում է՝ համագործակցելով ընտանիքների, աշակերտների, կոլեգաների և կրթության այլ գործընկերների հետ՝ խթանելու յուրաքանչյուր աշակերտի հաջողությունը և բարեկեցությունը՝ հատուկ կրթության վերաբերյալ տեղեկատվություն, ռեսուրսներ և աջակցություն տրամադրելով:

Հեռախոսակապի կենտրոն՝ (213) 241-6701 հեռախոսահամարով

Հեռախոսակապի կենտրոնի նպատակն է կառավարել հատուկ կրթությանն առնչվող հարցերը և մտահոգությունները:

Գանգատների պատասխանների բաժանմունք ((District's Complaint Response Unit (CRU))՝ (800)933-8133 հեռախոսահամարով:

CRU-ի նպատակն է համայնքին հնարավորություն ընձեռել լուծելու ծնողների գանգատները, որպեսզի ծնողները կարիք չունենան դիմելու արտաքին գանգատարկման և պատշաճ իրավական ընթացակարգերից օգտվելու մեխանիզմներին: CRU-ն կառավարում է հարցումները և գանգատները, որոնք վերաբերում են հատուկ կրթությանը և օրինական պատասխաններ է տրամադրում այն ծնողներին, ովքեր գանգատներ են ներկայացնում:

Համայնքային խորհրդատվական հանձնախումբ՝ (CAC) (213))481-3550 հեռախոսահամարով

CAC-ը, ինչպես պահանջվում է Կալիֆորնիայի օրենքով, կազմված է ծնողներից, աշակերտներից և հաշմանդամ չափահասներից, ուսուցիչներից, այլ դպրոցների անձնակազմերից, այլ գործակալությունների ներկայացուցիչներից և այն անձանցից, ովքեր մտահոգված են հաշմանդամ անձանց կարիքներով: CAC-ն շրջանին խորհուրդներ է տրամադրում իր հատուկ կրթության տեղական ծրագրի շրջանի (SELPA) ստեղծման մասին: CAC-ն կանոնավոր կերպով հանդիպումներ է կազմակերպում: Հանդիպումների ամսաթվերին վերաբերող տեղեկատվության համար խնդրում ենք զանգահարել (213))481-3350 հեռախոսահամարով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեր երեխան հատուկ կրթության ծառայությունների կարիք ունի: Էջ 1
Որո՞նք են հատուկ կրթության ծառայությունները:
Որո՞նք են առնչվող ծառայությունները:
Երեք տարեկանից ցածր երեխաների համար ծառայություններ կա՞ն:
Ե՞րբ է երեխան իրավունակ հատուկ կրթության ծառայություններից օգտվելու համար:

ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ Էջ 2

Քայլ 1. Գնահատման ուղեգիր

Քայլ 2. Գնահատում
Քայլ 3. Անհատականացված կրթական ծրագրի (IEP) ստեղծում և իրականացում
Քայլ 4. IEP վերանայում Էջ 18

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ՝ ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԵՐՔՈ

Նախապես գրավոր ծանուցում ստանալու Ձեր իրավունքը
Ձեր երեխային ներառող գործողություններում ընդգրկելու համաձայնության Ձեր իրավունքը
Հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների շարունակական տրամադրման համաձայնության չեղարկման Ձեր իրավունքը
Կրթական արձանագրություններից օգտվելու Ձեր իրավունքը
Ընթացակարգային երաշխիքների Ձեր իրավունքը՝ լուծելու տարաձայնություններն առ այն, թե ինչն է համապատասխան Ձեր երեխային

- Տարաձայնության ոչ պաշտոնական լուծում (IDR)
- Դատական լսումների վարույթի պատշաճ ընթացակարգ

Գանգատ ներկայացնելու Ձեր իրավունքը

- Տեղական գանգատներ
- Նահանգային գանգատներ

Ձեր երեխայի՝ խտրականությունից և հետապնդումից պաշտպանված լինելու իրավունքը

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՄՆԱՎՈՐ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԱՌԱՆՑ ՀԱՄԱՑՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՈՒՂԵԳՐԻ Էջ 32

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Էջ 33 Page 25

ՓՈԽԱՆՈՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Էջ 35 Page 26

ՀԱՃԱԽԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ Էջ 37 Page 27

ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեր երեխան հատուկ կրթության ծառայությունների կարիք ունի՞:

Լոս Անջելեսի միավորված դպրոցական համայնքը հավատարիմ է՝ հոգալու իր յուրաքանչյուր աշակերտի կրթական կարիքները: Յուրաքանչյուր համայնքային դպրոց ունի ծնողներին կամ խնամակալներին, աշակերտներին, եթե հարմար է, ինչպես նաև դպրոցի անձնակազմին համախմբելու գործընթաց՝ զբաղվելու որևէ հարցով, որը խանգարում է աշակերտի հաջողությանը դպրոցում: Այս խումբը աշակերտի աջակցության և առաջընթացի խումբն (SSPT) է: Խումբը պատասխանատու է ճանաչելու աշակերտի կարիքները, ուղեգրեր տրամադրելու համապատասխան միջամտությունների համար և ծրագիր ստեղծելու, որպեսզի աշակերտը կարողանա առաջադիմող լինել:

1973թ. վերականգնման մասին օրենքի 504 հոդվածի համաձայն հաշմանդամ աշակերտը կարող է հարմարությունների կամ դասարանի մեջ փոփոխությունների իրավունք ունենալ: Դուք կամ Ձեր երեխայի ուսուցիչը կարող եք հոդված 504-ի ներքո կատարվող Ձեր երեխայի գնահատման համար գրավոր խնդրանք ներկայացնել դպրոցի վարչությանը, որպեսզի որոշում կայացվի, թե արդյոք հարմարեցումները կամ փոփոխությունները հարմար կլինեն: Ձեզ կծանուցվի, թե երբ պետք է տեղի ունենա հանդիպումը, և կխրախուսվի Ձեր մասնակցությունն այս հանդիպմանը: Դրանից հետո հնարավոր կլինի Ձեր երեխային հանրակրթական դասարանում հարմարություններ, փոփոխություններ և միջամտություններիռազմավարություններ տրամադրել: Հոդված 504-ի մասին հավելյալ տեղեկությունների համար տե՛ս համայնքի *«Հոդված 504-ը և հաշմանդամ աշակերտները»* գրքույկը:

Երբեմն, սակայն, աշակերտները կարող են հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների կարիք ունենալ: Հատուկ կրթության իրավունակությունը որոշում է Անհատականացված կրթական ծրագրի (IEP) թիմը, երբ աշակերտը պաշտոնապես գնահատվում է: Աշակերտները հատուկ կրթություն ծառայություններից օգտվում են միայն այն դեպքում, եթե հանրակրթական ծրագրի բոլոր ռեսուրսներն ի նկատի են առնվել:

Որո՞նք են հատուկ կրթության ծառայությունները:

Հատուկ կրթության ծառայությունները առանձնահատուկ կերպով նախատեսված ուսուցման մեթոդներ են՝ բավարարելու հաշմանդամ աշակերտների եզակի կրթական կարիքները, ովքեր օրենքով բավարարում են իրավունակության չափանիշները: Հատուկ կրթության ծառայությունները կարող են սկսել երեք (3) տարեկանից և կարող են շարունակվել՝ մինչև Ձեր երեխան ավարտի կամ դառնա քսաներկու (22) տարեկան:

Որո՞նք են առնչություն ունեցող ծառայությունները:

Առնչություն ունեցող ծառայություններն են փոխադրումը, զարգացման, ուղղիչ և այլ աջակցող ծառայությունները, որոնք անհրաժեշտ են՝ աջակցելու երեխային, որպեսզի նա օգուտ ստանա հատուկ կրթության ծառայություններից:

Երեք տարեկանից փոքր երեխաների համար ծառայություններ կա՞ն:

Կալիֆորնիայում երեք (3) տարեկանից փոքր հաշմանդամ երեխաները կարող են վաղ միջամտության ծառայությունների իրավունք ունենալ, որոնք կօգնեն ուժեղացնել նրանց զարգացումը: Այն երեխաները, ովքեր վաղ միջամտության ծառայությունների իրավունք ունեն, համայնքից ծառայություններ կստանան, եթե նրանք միայն տեսողության, լսողության կամ ծանր օրթոպեդիկ վնասվածք ունեն: Այս տարիքի մնացած բոլոր երեխաները, ում մոտ զարգացման հապաղումներ են դրևորվում կամ ովքեր ռիսկային

առողջական խնդիրներ ունեն՝ զարգացման վնասակար հետևանքներով, վաղ միջամտության ծառայություններ կստանան իրենց տարածքային կենտրոններից: Հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք համայնքի Վաղ մանկության հատուկ կրթության գրասենյակ՝ (213) 241-4713 հեռախոսահամարով:

Ե՞րբ է երեխան իրավունակ հատուկ կրթական ծառայություններից օգտվելու:

Երեխան իրավունակ է հատուկ կրթություն ծառայություններ ստանալ, եթե IEP թիմը որոշում է, որ երեխան հաշմանդամություն ունի և հատուկ կրթություն ծառայությունների կարիք ունի՝ իր կրթությունը զարգացնելու համար:

Հաշմանդամությունները ներառում են՝

- Աուտիզմ
- Խլություն
- Խլություն-կուրություն
- Հուզական խանգարումներ
- Հաստատված բժշկական հաշմանդամություն (միայն 3-5 տարեկան երեխաների համար)
- Լսողություն դժվարություն
- Մտավոր հաշմանդամություն
- Բազմակի հաշմանդամություն
- Օրթոպեդիկ վնասված
- Այլ առողջական վնասվածքներ
- Ուսման առանձնահատուկ հաշմանդամություն
- Խոսքի կամ լեզվական դժվարություն
- Ուղեղի տրավմատիկ վնասվածք
- Տեսողության դժվարություն

ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հատուկ կրթության գործընթացը որոշում է, թե արդյոք Ձեր երեխան իրավունակ է կամ չէ՝ օգտվելու հատուկ կթության և դրան առնչվող ծառայություններից և եթե այդպես է, ապա հատուկ կրթության և դրան առնչվող ո՞ր ծառայություններն են հարմար Ձեր երեխայի համար:

Հատուկ կրթության գործընթացում չորս հիմնական քայլ գոյություն ունի.

ՔԱՅԼ 1. Գնահատման ուղեգիր

ՔԱՅԼ 2. Գ ն ա հ ա տ ո ւ մ

ՔԱՅԼ 3. Անհատականացված կրթական ծրագրի (IEP) ստեղծում և իրականացում

ՔԱՅԼ 4. IEP-ի վերանայում

ՔԱՅԼ 1. Գնահատման ուղեգիր

Ծնողը, խնամակալը, ուսուցիչը, դպրոցի այլ անձնակազմը և համայնքի անդամները, ովքեր վստահ են, որ երեխան կարող է հատուկ կրթության ծառայությունների կարիք ունենալ, կարող են երեխայի հատուկ կրթության գնահատում խնդրել: Խնդրանքը պետք է գրավոր արվի և տրամադրվի դպրոցի տնօրենին: Դպրոցում մատչելի է «Հատուկ կրթության գնահատման խնդրանքի» ձևաթուղթը: Երբ որ դպրոցը գնահատման խնդրանքն ստանա, Ձեզ գրավոր պատասխան կտրվի տասնհինգ (15) օրվա ընթացքում՝ չհաշված հինգ (5) օրից ավելի տևող

դպրոցական արձակուրդը: Եթե համայնքը որոշի, որ գնահատումը տեղին է, Դուք երկու ձևաթուղթ կստանաք՝ *Հատուկ կրթության գնահատման ծանուցում* և *Հատուկ կրթության գնահատման ծրագիր:* Եթե համայնքը որոշի, որ Ձեր երեխայի գնահատումը տեղին չէ, ապա Դուք այս որոշման մասին գրավոր ծանուցում կստանաք: Դուք կարող եք բողոքարկել այս որոշումը՝ օգտագործելով տարաձայնությունների լուծման գործընթացներից մեկը, որը նկարագրված է այս ուղեցույցի «Ընթացակարգային երաշխիքների Ձեր իրավունքը՝ լուծելու տարաձայնություններն առ այն, թե ինչն է տեղին Ձեր երեխայի համար» բաժնում:

Հատուկ կրթության գնահատման ծրագիրը նկարագրում է գնահատման տեսակները և նպատակները, որոնք կարող են օգտագործվել՝ որոշելու հատուկ կրթության ծառայություններից օգտվելու Ձեր երեխայի իրավունակությունը: Մինչ Ձեր երեխան կկարողանա գնահատվել, Դուք պետք է համաձայնեք գնահատմանը՝ ծրագիրն ստորագրելով: Ձեր դպրոցից պահանջվում է հիմնավորված ջանքեր գործադրել՝ նախնական գնահատման համար Ձեր համաձայնությունը ձեռք բերելու նպատակով: *Հատուկ կրթության գնահատման ծրագիրն* ստանալուց հետո Դուք առնվազն տասնհինգ (15) օր ունեք՝ ծրագիրն ստորագրելով դրան համաձայնելու համար: Դպրոցը վաթսուն (60) օր ունի՝ չհաշված հինգից (5) ավելի օր տևող դպրոցական արձակուրդը, Ձեր կողմից ստորագրված Գնահատման ծրագիրն ստանալուց հետո գնահատումն ավարտելու և IEP հանդիպում անցկացնելու համար: Եթե Ձեր երեխան պետական դպրոցում ներառված է կամ Դուք փորձում եք նրան ներառել պետական դպրոց և մերժում եք համաձայնություն տրամադրել, կամ չեք պատասխանում նախնական գնահատման համաձայնության տրամադրման խնդրանքին, համայնքը կարող է, բայց որը չի պահանջվում, պատշաճ գործընթացի լսում խնդրել՝ վարչական օրենքի դատավորից հրաման հայցելու, որպեսզի առանց ծնողի համաձայնության գնահատում անցկացվի: Համայնքը չի կարող նկատի չառնել Ձեր համաձայնության բացակայությունը, եթե Դուք Ձեր սեփական ծախսերով Ձեր երեխային ներառել եք մասնավոր դպրոցում կամ եթե Ձեր երեխային տնային ուսուցում եք տրամադրում:

Եթե երեխան գտնվում է նահանգի խնամակալության ներքո և ծնողի հետ չի ապրում, ապա համայնքը նախնական գնահատում անցկացնելու համար ծնողի համաձայնության կարիքը չունի, եթե՝

1. Չնայած պատշաճ ջանքերի, համայնքը չի կարող գտնել երեխայի ծնողին.
2. Ծնողի իրավունքները նահանգային օրենքի համաձայն դադարեցվել են, կամ
3. Դատավորը ծնողի փոխարեն մեկ ուրիշ անձնավորության է իրավունք շնորհել՝ կրթական որոշումներ կայացնելու համար:

ՔԱՅԼ 2. Գնահատում

Գնահատումը ներառում է Ձեր երեխայի մասին տեղեկությունների հավաքում՝ որոշելու, թե արդյոք Ձեր երեխան հաշմանդամություն ունի, ինչպես նաև հատուկ կրթության ծառայությունների բնույթը և չափը, որոնց կարիք Ձեր երեխան կարող է ունենալ: Գնահատումները կարող են ներառել անհատական ստուգումներ, երեխայի դիտարկումը դպրոցում, հարցազրույցներ երեխայի և նրա հետ աշխատող դպրոցի անձնակազմի հետ, ինչպես նաև դպրոցի արձանագրությունների, զեկույցների և աշխատանքի նմուշների վերանայում:

Գնահատման ընթացքում

- Ձեր երեխան կգնահատվի այն բոլոր ոլորտներում, որոնցում հաշմանդամության առկայության կասկած կա:

- Բազմամասնագիտական թիմը, այդ թվում առնվազն մեկ ուսուցիչ կամ մեկ այլ մասնագետ, ով գիտելիքներ ունի Ձեր երեխայի մոտ կասկածվող հաշմանդամության ոլորտում, կգնահատի Ձեր երեխային:
- Գնահատումը կանցկացվի այն լեզով և ձևով, որպեսզի հնարավոր լինի ճշգրիտ տեղեկատվություն ձեռք բերել առ այն, թե ինչ գիտի Ձեր երեխան և ինչ կարող է կատարել ուսումնական, զարգացման և գործունակության տեսանկյունից, եթե դա հնարավոր չէ տրամադրել կամ կատարել: Անհրաժեշտության դեպքում թարգմանիչ կօգտագործվի՝ գնահատմանն օգնելու համար:
- Գնահատումը կներառի մի շարք համապատասխան ստուգումներ՝ չափելու Ձեր երեխայի ուժեղ կողմերը և կարիքները: Այս ստուգումներն անցկացողները համապատասխան որակավորում կունենան:
- Գնահատումը կհարմարեցվի զգայական, ֆիզիկական կամ խոսքի հմտությունների դժվարություններ ունեցող երեխաներին:
- Ստուգման և գնահատման նյութերը ռասայական, մշակութային կամ սեռական տեսանկյունից խտրական չեն լինի:

Ձեր երեխայի անկախ կրթական գնահատման Ձեր իրավունքը

Դուք իրավունք ունեք որևէ պահի Ձեր ծախսերով գնահատում ձեռք բերել՝ որակավորված մասնագետի կողմից, ով դպրոցական համայնքում չի աշխատում (այսինքն՝ անկախ գնահատող) և գնահատումից ձեռք բերած տեղեկությունները ի նկատի ունենալ IEP հանդիպմանը: Դուք նաև կարող եք գնահատման հաշվետվությունը որպես ապացույց ներկայացնել Ձեր երեխային վերաբերող պատշաճ գործընթացի լսմանը:

Դուք նաև իրավունք ունեք խնդրել, որպեսզի համայնքը վճարի Ձեր երեխայի անկախ կրթական գնահատման համար, եթե համաձայն չեք համայնքի կողմից արված գնահատման հետ: Եթե Դուք համայնքի հաշվին անկախ գնահատում խնդրեք, համայնքը կարող է կամ (1) համաձայնել գնահատումը ֆինանսավորելու, կամ (2) պատշաճ գործընթացի վարույթ նախաձեռնել՝ ցույց տալու, որ իր կողմից արված գնահատումը պատշաճ է: Եթե համայնքը օգտագործի պատշաճ գործընթացի վարույթը և լսումների պաշտոնյայի վերջնական որոշումն այն լինի, որ համայնքի գնահատումը պատշաճ էր, Դուք դեռ անկախ կրթական գնահատման իրավունք կունենաք, բայց Ձեզնից կպահանջվի վճարել այդ գնահատման համար:

Երբ որ համայնքը վճարի անկախ կրթական գնահատման համար, չափանիշները, որոնց ներքո ձեռք է բերվում այդ գնահատումը, ներառյալ գնահատման վայրը և գնահատողի որակավորումները, պետք է նույն չափանիշներով լինեն, որոնք օգտագործվել են համայնքի կողմից, երբ այն գնահատում է նախաձեռնել:

Դուք պետական միջոցներով միայն մեկ անկախ գնահատման իրավունք ունեք Ձեր երեխայի համար՝ ամեն անգամ, երբ համայնքը գնահատում է կատարում, որի հետ Դուք համաձայն չեք:

ՔԱՅԼ 3. Անհատականացված կրթական ծրագրի (IEP) ստեղծում և իրականացում

Երբ որ Ձեր երեխան գնահատված լինի, Անհատականացված կրթական ծրագրի (IEP) հանդիպում կանցկացվի: IEP հանդիպումը կանցկացվի այնպիսի ժամանակահատվածում, որը հարմար կլինի և՛ Ձեզ և՛ համայնքի ներկայացուցիչներին: Այս հանդիպմանը IEP թիմը կքննարկի գնահատման արդյունքները և կորոշի, թե արդյոք Ձեր երեխան իրավունակ է հատուկ կրթության ծառայությունների համար: IEP կստեղծվի հանդիպման ընթացքում:

IEP թիմի հանդիպման ներածական ձևակերպումներ

- IEP հանդիպումը համագործակցային գործընթաց է, և բոլոր մասնակիցներին հնարավորություն կընձեռնվի հարցեր տալ և հանձնարարականներ ու առաջարկներ տրամադրել.
- IEP թիմը լիազորություն և պատասխանատվություն ունի՝ ստեղծելու այնպիսի ծրագիր, որից երեխան կարող է կարևոր օգուտ քաղել.
- IEP-ի նախագիծ տարբերակը, վարքագծի միջամտության ծրագիրը կամ գնահատման ծրագիրը կարող են փոխվել IEP թիմի քննարկումների արդյունքում.
- Կապակցված ծառայություններին և տեղադրմանը վերաբերող որոշումը ի հայտ կգա IEP հանդիպման ժամանակ, եթե թիմը չհամաձայնի, որ բավարար չափով տեղեկատվություն չկա՝ տեղադրման մասին որոշում կայացնելու համար.
- Համայնքը ընտանիքը հավասար գործընկեր է համարում կրթությանը վերաբերող որոշումների կայացման գործընթացում, և
- Թիմի որևէ անդամ կարող է նպատակ առաջարկել IEP-ում, նույնիսկ եթե այն ներառված չէ նպատակների «Welligent» շտեմարանում:

Հետևյալ անձինք IEP թիմի անդամներ են՝

- Դուք՝ որպես երեխայի ծնող կամ խնամակալ և/կամ Ձեր ներկայացուցիչը.
- Դպրոցի ուսմասվարը.
- Հատուկ կրթության ուսուցիչը կամ հատուկ կրթություն տրամադրողը, երբ տեղին է.
- Դասվարը, եթե Ձեր երեխան մասնակցում կամ կարող է մասնակցել համընդհանուր կրթությանը.
- Այլ մարդիկ, ինչպես օրինակ Ձեր երեխան, ում Դուք կամ դպրոցը կցանկանաք հրավիրել, և
- Անձնավորություն, ով լավատեղյակ է գնահատման ընթացակարգերից, որոնք օգտագործվում են Ձեր երեխային գնահատելու համար, ծանոթ է գնահատման արդյունքներին և որակավորված է մեկնաբանելու արդյունքների կրթական հետևանքները: Սա կարող է լինել վերը նկարագրված անձանցից որևէ մեկը:
- Կան հանգամանքներ, երբ IEP թիմի անդամները Ձեր գրավոր հաստատմամբ կարող են թույլտվություն ստանալ չմասնակցելու:

Ես IEP թիմի հանդիպման մասին ծանուցում կստանա՞մ:

Դպրոցը հանդիպումից առաջ ողջամիտ ժամկետներում Ձեզ գրավոր ծանուցում կտրամադրի IEP թիմի հանդիպման մասին՝ *Անհատականացված կրթական ծրագրի հանդիպմանը մասնակցելու* ծանուցում ուղարկելով: Այս ծանուցումը կներառի՝ ամսաթիվը, ժամը, հանդիպման վայրը, հանդիպման պատճառը և այն, թե ովքեր ներկա կլինեն հանդիպմանը:

Դուք IEP թիմի կարևոր անդամ եք: Եթե Դուք չեք կարող ներկա գտնվել IEP թիմի հանդիպմանը, կարող եք խնդրել դպրոցին փոխել հանդիպման օրը: Դպրոցը նույնպես կփորձի դյուրացնել Ձեր մասնակցությունը՝ այլ մեթոդներ օգտագործելով, ինչպիսիք են հեռախոսային կոնֆերանսը կամ տեսակոնֆերանսը: Դպրոցը պետք է համոզվի, որ Դուք հասկանում եք, թե ինչ է տեղի ունենում հանդիպման ընթացքում: Օրինակ, դպրոցը Ձեզ թարգմանիչ կտրամադրի, եթե Դուք լսողության հետ կապված հաշմանդամություն ունեք կամ բանավոր թարգմանիչ, եթե Ձեր հիմնական լեզուն անգլերենը չէ: Եթե գոհ չլինեք բանավոր թարգմանության համարժեքությունից, Դուք կարող եք բողոքարկել կրթական հավասարության համապատասխանության գրասենյակին (Educational Equity Compliance Office)՝ (213) 241-7682 հեռախոսահամարով: Հավելյալ տեղեկատվության համար տե՛ս՝ «*ԼՐԱՑՈՒՑԻՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԵՐՔՈ*» բաժնի «*Բողոքարկելու Ձեր իրավունքը՝ օգտագործելով բողոքարկման միասնական ընթացակարգերը, տեղական բողոքները»:* Եթե Դուք որոշեք չմասնակցել, Դուք կարող եք համայնքին թույլ տալ IEP թիմի հանդիպումն առանց Ձեզ անցկացնել:

Ի՞նչ է IEP-ն:

IEP-ն գրավոր փաստաթուղթ է, որը ստեղծվել և համաձայնցեվել է IEP թիմի կողմից, որը որոշում է՝

- Ձեր երեխայի կրթական և ֆունկցիոնալ առաջադիմության ներկայիս մակարդակը, ինչպես նաև կրթական և ֆունկցիոնալ կարիքները:
- Տարեկան նպատակները, որոնց Ձեր երեխան պետք է հասնի:
- Հատուկ կրթությունը և առնչվող ծառայությունները, հարմարությունները և փոփոխությունները, որոնց կարիքն ունի Ձեր երեխան և որոնք կստանա:
- Սկսած այն տարուց, երբ Ձեր երեխան 14 տարեկան կդառնա, Փոխադրման անհատական ծրագիր (ITP) կստեղծվի՝ օգնելու Ձեր երեխայի՝ դպրոցից դեպի հետ-դպրոցական միջոցառումներին մասնակցելու համար անհրաժեշտ փոխանցմանը աջակցելու համար: Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս համայնքի «*ITP-ն և Դուք*» հրապարակումը:
- Համապատասխան տեղադրումը, որը նվազագույն սահմանափակ միջավայր է Ձեր երեխայի համար:
- Արդյոք Ձեր երեխան փոխադրման ծառայությունների կարիք ունի:
- Ձեր երեխայի առաջընթացն ինչպես կգնահատվի և կզեկուցվի Ձեզ:

IEP թիմի հանդիպմանը Դուք կստանաք IEP պատճենը: Եթե չմասնակցեք IEP թիմի հանդիպմանը, IEP-ն կբացատրվի և կրկնօրինակը կուղարկվի Ձեզ: Դուք իրավունք ունեք համաձայնել կամ չհամաձայնել IEP-ի որևէ մասի հետ: Դպրոցից պաանջվում է ստանալ Ձեր համաձանյությունը IEP վերաբերյալ՝ մինչ Ձեր երեխան հատուկ կրթության ծառայություններ կստանա: Ձեր գրավոր խնդրանքի դեպքում Ձեզ կտրվի IEP-ի պատճենը Ձեր հիմնական լեզվով, երբ հնարավոր է: Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս համայնքի «*IEP-ն և Դուք*» հրապարակումը:

Ի՞նչ ծրագրեր, օժանդակություններ և ծառայություններ են մատչելի:

Հատուկ կրթության բաժինը ծրագրի ընտրանքների շարունակություն է տրամադրում այն աշակերտներին, ովքեր իրավունակ են համարվել հատուկ կրթության համար: Անհատականացված կրթական ծրագրի (IEP) թիմերը պետք է նախ ի նկատի ունենան

հանրակրթական դասարանը, երբ հաշմանդամ աշակերտներին հատուկ կրթության ծառայություններ տրամադրելու համար լավագույն միջավայր են փնտրում: Հատուկ կրթության ծառայությունները և օժանդակությունները տրամադրվում են տարբեր ձևերով, որոնք ներառում բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

1) <u>Սովորական կրթական ծրագիր</u>
   a. Սովորական կրթական ծրագիրը համազոր է «հանրակրթությանը»: Հանրակրթությունը կրթական այն ծրագիրն է, որը աշակերտները պետք է ստանան, որը հիմնված է նահանգային չափանիշերի վրա և գնահատված նահանգային տարեկան կրթական չափանիշների վրա հիմնված գնահատումներով:

2) <u>Ռեսուրսային մասնագետի ծրագիր</u>
   a. Ռեսուրսային մասնագետի ծրագիրը տրամադրում է՝
      i) Ուսուցում և ծառայություններ այն աշակերտների համար, ում կարիքները ճանաչվել են IEP-ում և ում նշանակվել է օրվա մեծ մասը սովորական դասարանում ուսում ստանալ:

      ii) Հատուկ կրթության ծառայությունների համակարգում սովորական դպրոցական ծրագրերով հաշմանդամ այն աշակերտների համար, ովքեր ներառված են ռեսուրսային մասնագետի ծրագրում:
      iii) Ծառայություններ տարբեր մոդելներում (այսինքն համգործակցային պլանավորում և ուսուցում, ուղղակի հրահանգներ աշակերտներին, խորհրդակցություն անձնակազմի և ծնողի հետ):

3) <u>Նախանշված ուսուցում և ծառայություններ (նաև հիշատակվում են որպես «Առնչվող ծառայություններ»)</u>
   a. Խոսքային և լեզվական ծառայություններ
      i) Դպրոցում հիմնված խոսքի թերապիան աջակցում է այն աշակերտների կրթական ծրագրին, ովքեր հաղորդակցման դժվարություն ունեն, ներառյալ արտաբերման, խոսքի, սահունության և/կամ ձայնի:
      ii) Խոսքի և լեզվի մասնագետներն (SLP) աշխատում են որպես բազմամասնագիտական թիմի անդամ, ովքեր ծառայում են ողջ դպրոցի աշակերտներին՝ զարգացնելու հաղորդակցման և լեզվական հմտությունները, որոնք անհրաժեշտ են դպրոցում հաջողության հասնելու համար:
      iii) Մատուցումը կախված է աշակերտի գնահատված կարիքներից (այսինքն՝ ուղղակի ծառայություններ, խոհրդատվություն, խմբային ծառայություններ, ծնողի վերապատրաստում)

   b. Լսողությանն առնչվող ծառայություններ.
      i) Լսողությանն առնչվող գնահատումները տրամադրվում են Լսողության կրթական մասնագետների կողմից՝ ծննդից մինչև 22 տարեկանը:
      ii) Եթե երեխային հնարավոր չէ քննել Լսողության ռեսուրս բաժնում ((Audiological Resource Unit (ARU)), լսողության մասնագետները երեխան ուղարկում են նրա անձնական բժշկի կամ լսողության մասնագետի մոտ և համապատասխանաբար հետադարձ կապ են պահում ընտանիքի հետ:

iii) Համայնքի դպրոցները և նախադպրոցական ծրագրերը աշակերտներին ուղղորդում են ARU, երբ կասկածում են, որ նրանք կարող են լսողության կորուստ ունենալ՝ կամ լսողության չափման սքրինինգ չկատարելու կամ ուսուցչի կամ ծնողի մտահոգությունների պատճառով:

c. Կողմնորոշում և դյուրաշարժության ծառայություններ.

i) Տրամադրվում է տեսողության դժվարություններ ունեցող աշակերտներին՝ մասնագիտացված հմտությունների բնագավառում, ներառյալ սպիտակ անթացուպի օգտագործումը՝ ապահով և կողմնորոշված ճամփորդելու համար:

ii) Ուսուցում, որը նպատակ ունի հավասար մատչելիություն խթանել, ինչպես նաև ներառված հնարավորություններ՝ աշակերտի դասարանում, դպրոցում և համայնքային միջավայրում:

d. Տանը և հիվանդանոցում տրվող ուսուցումը տրամադրում է՝

i) Ծառայություններ այն աշակերտներին, ովքեր ստիպված են մնալ տանը կամ հիվանդանոցում և իրավունակ են ուսումնական ծառայություններ ստանալ այնտեղ գտնվելու առաջին իսկ օրվանից, երբ ակնկալվում է, որ մեկուսացումը կհանգեցնի առնվազն տաս (10) դպրոցական օրվա բացակայության, որը հաստատված է Կալիֆորնիայում վկայագրված բժշկի ախտորոշմամբ:

ii) Առարկաների և դասընթացների ուսուցումը կապված է աշակերտի տնային ուսուցման ծրագրին: Ավելի ընդլայնված ժամանակահատվածում այն չի փոխարինում պահանջվող սովորական ուսուցման ծրագրին:

e. Քրոնիկական հիվանդություններ և լուրջ առողջական խնդիրներ ունեցող աշակերտների համար նախատեսված ծառայությունները:

i) Մասնագիտացված ծառայություններ կարող են տրամադրվել այն աշակերտներին, ովքեր իրավունակ են համարվել հոդված 3030(f)-ի համաձայն: Նման ծառայությունները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

a. Անհատական խորհրդատվություն.
b. Տնային կամ հիվանդանոցային ուսուցում, և
c. Ուսուցման այլ մեթոդներ, որոնք հաղորդակցության ընդլայնված տեխնոլոգիաներ են օգտագործում:

ii) Այն աշակերտների համար, ում բժշկական խնդիրը նվազեցման կամ պասիվ փուլում է, IEP թիմը պետք է նշի աշակերտի կրթական առաջընթացը վերահսկելու հաճախականությունը՝ հավաստիացնելու, որ հիվանդությունը չի խոչընդոտում աշակերտի կրթական առաջընթացին:

iii) Համաձայն հոդված 3030(f)-ի, երբ աշակերտը ճանաչվում է սուր առողջական խնդիր ունեցող, որը հանգեցնում է նրա բացակայությանը դպրոցում՝ ավելի քան հինգ (5) օր անընդմեջ, դասվարի կամ ծնողի ծանուցմամբ, դպրոցի տնօրենը կամ նրա կողմից նշանակված որևէ մեկը պետք է հավաստիացնի, որ IEP թիմը ժողով է գումարել՝ համապատասխան կրթական ծառայությունները որոշելու համար:

iv) Եթե սակավադեպ հիվանդության դեպք կա, IEP թիմը ժողով կգումարի՝ աշակերտի համար այլընտրանքային միջոցներ ի նկատի ունենալու, որպեսզի աշակերտը կարողանա կարողություններ ցուցադրել ուսման պահանջվող դասընթացում, որպեսզի բացակայությունների ավելացող քանակությունը չկանխարգելի նրա կրթական առաջընթացը:

f. Հարմարեցված ֆիզիկական կրթության ծառայությունները տրամադրում են՝

i) Հարմարեցված ֆիզիկական կրթություն (APE) հաշմանդամ անձանց համար, ովքեր մոտորիկայի զգալի դժվարություններ ունեն հետևյալ ոլորտներից մեկում կամ մի քանիսում՝ ընկալման մոտորիկայի հմտություններ, հենաշարժական հմտություններ, առարկայի վերահսկման հմտություններ, ֆիզիկական լավ մարզավիճակ և հարմարվող վարքագիծ, որոնք չեն կարող ապահով և բարեհաջող կերպով մասնակցել ընդհանուր ֆիզիկական կրթության ծրագրին:

a. APE-ն տարբեր հաշմանդամություն ունեցող աշակերտների համար ծառայության մատուցման տարբեր մոդելներ ունի: Ծառայության մատուցման մոդելները ներառում են ուղղակի/համաուսուցում, հատուկ մշակված, համագործակցություն և խորհրդատվություն: Առաջարկվում է, որ ֆիզկուլտուրայի ընդհանուր և հարմարեցված մանկավարժները համագործակցային, խորհրդատվական կամ համաուսուցման մոտեցում դրսևորեն՝ միավորված մասնակցության առավելագույն չափ ապահովելու հաշմանդամ և ոչ հաշմանդամ աշակերտների միջև:

g. Ֆիզիոթերապիայի և օկուպացիոն թերապիայի ծառայություններ.

i) Ֆիզիոթերապիա

a. Դպրոցի ֆիզիոթերապիան (PT) կենտրոնանում է աշակերտների և նրանց նպատակային, նպատակասլաց գործողությունների առաջընթացին, որոնք բարելավում են նրանց ֆունկցիոնալ կատարումը դպրոցական օրվա ընթացքում:

b. Դպրոցի ֆիզիոթերապիան գնահատում է և աշակերտների կարիքների միջամտություն է տրամադրում, որոնք հիմնված են նրանց բժշկական ախտորոշումների վրա և ազդում են նրանց՝ դպրոցի կամպուսից ֆիզիկապես օգտվելու վրա: Գնահատման ոլորտները ներառում են շրջակա միջավայրի հավանական խոչընդոտների և ֆիզիկական մատչելիության վերլուծությունը, ինչպես նաև դրանց հիմքում ընկած խնդիրները, այդ թվում՝ կեցվածքը, հավասարակշռությունը, ուժը, կողմնորոշումը, մոտորիկայի վերահսկողությունը, շարժունակությունը, ընդհանուր մոտորիկայի հմտությունները և տոկունությունը:

c. Դպրոցի ֆիզիոթերապիան կարող է ներառել առաջադրանքի կամ շրջակա միջավայրի հարմարեցումներ, իսկ PT միջամտությունը կարող է բաղկացած լինել ուղղակի բուժման/միջամտության,

խորհրդատվության և վերահսկման, ինչպես նաև խորհրդատվության և միջամտության համակցությունից բոլոր աշակերտների համար:

ii) Օկուպացիոն թերապիա

a. Դպրոցի օկուպացիոն թերապիան (OT) օժանդակ ծառայություն է աշակերտի հատուկ կրթական ծրագրին՝ շեշտելու արդյունավետության կարևորությունը դպրոցական միջավայրում:

b. Դպրոցի օկուպացիոն թերապիան գնահատում և զբաղվում է դրա հիմքում ընկած հետևյալ ոլորտներով՝ կեցվածքային կայունություն, մոտորիկայի լավ հմտություններ, տեսողական ընկալում, տեսողական մոտորիկայի ներառում, զգայական մշակում և ինքնախնամք դպրոցական օրվա ընթացքում և սոցիալական մասնակցություն:

c. Օկուպացիոն թերապիայի ծառայությունները կարող են ներառել առաջադրանքի կամ միջավայրի հարմարեցում, և բաղկացած է ուղղակի միջամտության, խորհրդատվության և վերահսկման համակցությունից:

h. Տեսողության ծառայությունները տրամադրում են.

i) Մասնակի տեսողությամբ կույրերի ծառայություններ այն իրավունակ աշակերտների համար, ովքեր փաստաթղթով հաստատված տեսողության դժվարության (VI) ախտորոշում ունեն, որը տրամադրված է ակնաբույժի կամ ակնաչափի կողմից, ինչպես նաև ֆունկցիոնալ տեսողության գնահատման արդյունքում, որը ազդում է հիմնական կամ այլընտրանքային ուսումնական ծրագրում աշակերտի ունեցած ուսումնական առաջընթացի վրա:

ii) Ծառայություններ VI-ի շրջիկ ծառայությունների կողմից՝ հանրակրթական ծրագրով սովորող աշակերտների համար:

iii) Ծառայություններ VI-ի հատուկ օրվա ծրագրում՝ հանրակրթական ծրագրող առաջնորդվող կամպուսում:

iv) Շրջիկ ծառայություններ հատուկ կրթության դպրոցի աշակերտների համար:

i. Խորհրդատվության և ուղղորդող ծառայություններ, ներառյալ վերականգնողական խորհրդատվությունը, որը տրամադրում է.

i) Դպրոցի հոգեբանների և/կամ սոցիալական աշխատողների կողմից տրամադրված կրթական խորհրդատվությունը, որտեղ աշակերտին աջակցություն է ցուցաբերվում՝ պլանավորելու և իրականացնելու իր անմիջական երկարաժամկետ կրթական ծրագիրը և/կամ անձնական խորհրդատվությունը, որտեղ աշակերտին օգնություն է ցուցաբերվում՝ զարգացնելու իր ունակությունները՝ սոցիալական և անձնական պատասխանատվությամբ գործելու համար:

j. Գնահատումից և IEP-ի ստեղծումից բացի այլ հոգեբանական ծառայություններ.

i) Կրթական տեսանկյունից առնչություն ունեցող ինտենսիվ

խորհրդատվական ծառայությունները (ERICS) ներառում են ինտենսիվ խորհրդատվական ծառայություններ, որոնք նպատակ ունեն կիրառվող հոգեթերապիայի միջոցով բարելավել անհատների կամ խմբերի ուսման և վարքագծային խնդիրները: Այս ծառայությունները սովորաբար տրամադրվում են արտոնագրված կլինիկական սոցիալական աշխատողների (LCSWs) կամ դպրոցի հոգեբանների կողմից՝ պետական դպրոցի միջավայրում:

k. Ծնողների խորհրդատվություն և վերապատրաստում.
   i) Վերապատրաստում, որը նախատեսված է աջակցել ծնողներին՝ հասկանալու իրենց երեխայի հատուկ կարիքները, ինչպես նաև ծնողներին տեղեկատվություն տրամադրելու երեխայի զարգացման վերաբերյալ: Այս վերապատրաստումներն անցկացվում են ողջ համայնքի դպրոցումներում կամ համայնքային տեղական գրասենյակներում՝ LCSW-ների կամ դպրոցի հոգեբանների կողմից:

l. Առողջապահական և բուժքույրական ծառայությունները տրամադրում են.
   i) Առողջության գնահատում՝ որպես IEP գործընթացի մի մաս:
   ii) Առաջարկություններ IEP թիմերին, որոնք վերաբերում են առողջապահական խնդիրների պատճառով անհրաժեշտ օժանդակություններին և հարմարություններին:
   iii) Առողջապահությանն առնչվող ծառայություններ, որոնք սահմանված են IEP-ում, ներառյալ ֆիզիկական առողջության խնամքի գործողությունները:
   iv) Աջակցություն այն աշակերտներին, ովքեր առողջական մեծ կարիքներ ունեն, ներառյալ բժշկական նախագծերը:

m. Սոցիալական աշխատողի ծառայությունները տրամադրում են.
   i) Անհատական և/կամ խմբային խորհրդատվություն աշակերտների և նրանց անմիջական ընտանիքների համար:
   ii) Խորհրդատվություն աշակերտների, ծնողների, ուսուցիչների և այլ անձնակազմի հետ, որը վերաբերում է ընտանիքի և այլ սոցիալական գործոնների ազդեցությանը ուսման վրա, ինչպես նաև բացառիկ կարիքներ ունեցող անհատական աշակերտների զարգացման պահանջներին:
   iii) Համայնքային ռեսուրսների ցանցի ստեղծում, համապատասխան ուղեգրերի պատրաստում, ինչպես նաև միջնորդող հարաբերությունների ստեղծում դպրոցի, բացառիկ կարիքներով աշակերտների, ընտանիքի և տարբեր գործակալությունների միջև, որոնք սոցիալական, եկամտի պահպանման, աշխատանքի զարգացման, հոգեկան առողջության և զարգացման այլ ծառայություններ են տրամադրում:

n. Հատուկ ձևավորված մասնագիտական կրթության և կարիերայի զարգացման ծառայություններ.

i) Փոխադրման ծառայությունների համայնքային գրասենյակ (DOTS).

a. Բոլոր հաշմանդամ աշակերտների փոխադրման ծառայությունների պլանավորման և իրականացման համակարգում է տրամադրում՝ սկսած 14 տարեկանից (կամ ավելի փոքր, եթե հարմար է)՝ նրանց դպրոցից դեպի չափահասի ապրելակերպ պատրաստելու նպատակով:

b. Փոխադրման ուսուցիչներ է տրամադրում՝ ծառայություն մատուցելու հաշմանդամ աշակերտներին՝ հաճախելու համայնքի ավագ և միջնակարգ դպրոցներ:

c. Փոխադրման ծառայությունները հիմնված են աշակերտի անհատական կարիքների վրա՝ հաշվի առնելով աշակերտի նախընտրությունները և հետաքրքրությունները, և ներառում են ուսուցում, առնչվող ծառայություններ, համայնքային փորձառություններ, աշխատանքի զարգացում և հետ-դպրոցական չափահաս անձի ապրելակերպի այլ խնդիրներ, և եթե հարմար է, ամենօրյա ապրելակերպի հմտությունների և գործառնական մասնագիտական գնահատման ձեռքբերում:

ii) Կարիերայի և փոխադրման կենտրոն (CTC).

Աշխատանքի վրա հիմնված վերապատրաստման տրամադրում այն աշակերտներին, ովքեր ունակություն և պատրաստակամություն են ցուցաբերում աջակցող աշխատանքի և մասնագիտական վերապատրաստման համար՝ գլխավորապես 18-22 տարեկանների համար: CTC-ն այնպիսի տեղադրում և միջավայր է, որն առաջարկվում է ողջ համայնքով մեկ տարբեր հաստատություններում/հատուկ կրթության կենտրոններում:

iii) Փոխադրման զարգացած հմտությունների կենտրոն (CATS).

Աշխատանքի վրա հիմնված վերապատրաստում է տրամադրում այն աշակերտներին, ովքեր ավարտել են այլընտրանքային ուսումնական ծրագիրը մինչև 12-րդ դասարան և ովքեր ունակություն և պատրաստակամություն են ցուցաբերել քոլեջի կամպուսում մասնագիտական վերապատրաստում անցնելու:

o. Ժամանցի թերապիայի ծառայություններ.

i) Տրամադրվում են՝ բարելավելու հաշմանդամ աշակերտների սոցիալական, հուզական, ինչպես նաև ֆիզիկական և ճանաչողական հմտությունները:

ii) Կարող է բաղկացած լինել խաղի, հանգստի և ժամանցի գործողություններից, որոնք ներառում են խաղեր, սպորտ, արվեստ և ձեռքի աշխատանք, այգեգործություն, դրամա, երաժշտություն և բնություն՝ որպես թերապևտիկ միջամտություններ՝ խթանելու ցմահ հանգստի ձգտումը և առողջությունը:

p. Մասնագիտացված ծառայություններ, ինչպես օրինակ ընթերցողներ, արձանագրողներ և տեսողության ու լսողության ծառայություններ քիչ հանդիպող հաշմանդամությունների համար.

i) Աջակցող տեխնոլոգիա (AT).

a. Գործիքներ, որոնք պահանջվում են պահպանելու, բարելավելու կամ բարձրացնելու գործառնական ունակությունները՝ կամրջելու աշակերտի առաջընթացի և ուսումնական պլանի պահանջների միջև եղած բացը:

b. Ուսումնական պլանից օգտվելու հնարավորություն է ընձեռում՝ օժանդակության տարբեր ձևերի միջոցով, որոնք հիմնված են աշակերտի անհատական կարիքների վրա:

ii) Թարգմանիչներ, նշում կատարողներ, ընթերցողներ, արձանագրողներ և այլ անհատներ, ովքեր մասնագիտացված նյութեր և սարքավորումներ են տրամադրում քիչ հանդիպող հաշմանդամություն ունեցող աշակերտներին՝ ըստ աշակերտի գնահատված կարիքների:

q. Թարգմանչական ծառայությունները տրամադրում են՝

i) Գրադարձման բանավոր ծառայություններ, լեզվի գրադարձման ծառայություններ խաղաձողի միջոցով, ժեստերի լեզվով գրադարձման և թարգմանչական ծառայություններ, և տառադարձման ծառայություններ, ինչպիսիք են հաղորդակցման մատչելիությամբ իրական ժամանակի թարգմանություն այն աշակերտների համար, ովքեր ճանաչվել են որպես խուլ կամ լսողության դժվարություն ունեցող:

ii) Հատուկ թարգմանչական ծառայություններ խուլ-կույր երեխաների համար:

4) <u>Հատուկ դասընթացներ</u>

a. Հատուկ ծրագրով օրվա (SDP) հիմնական ուսումնական ծրագիր

i) SDP-հիմնական ուսումնական ծրագիրը նախատեսված է հաշմանդամ աշակերտների համար, ովքեր մասնակցում են հանրակրթական/հիմնական ուսումնական ծրագրին և աշխատում են ավագ դպրոցի դիպլոմի շուրջ: Որոշ աշակերտներ կարող են նահանգային/համայնքի կողմից հաստատված իրավունքից հրաժարման փաստաթղթի կարիք ունենալ՝ դիպլոմի պահանջները բավարարելու համար: Սակայն, SDP-հիմնական ուսումնական ծրագրի որոշ աշակերտներ ավարտելու վերաբերյալ վկայական կստանան, եթե շրջանավարտության մասին նահանգային և համայնքի բոլոր պահանջները չեն բավարարվել:

ii) SDP-հիմնական ուսումնական ծրագրում ներառված աշակերտներին նշանակվում են հատուկ կրթության դասվարներ՝ դպրոցական օրվա մեծ մասի համար (սովորաբար ավելի քան 50%) և այդ դրպեները հաշվարկվում են հանրակրթական ծրագրից դուրս:

iii) Երբ որ տեղին և հարմար է, SDP-հիմնական ուսումնական ծրագրի աշակերտները կարող են ներառվել/ուղղորդվել հանրակրթական ծրագրի դասարաններում կամ ծրագրերում, հատկապես երբ հատուկ ծրագրի օրվա ընթացքում առանձնահատուկ դասընթաց կամ գործողություն չի առաջարկվում:

iv) Ուսումնական պլանը, որը պետք է օգտագործվի SDP-հիմնական ուսումնական ծրագրում՝ համայնքի կողմից հաստատված հիմնական ուսումնական ծրագիր է, իսկ ուսուցիչները կարող են որոշակի նպատակների համար ուղղված հավելյալ նյութեր և ցուցումներ ավելացնել, եթե հարմար է:

b. Հատուկ ծրագրով օրվա (SDP) այլընտրանքային ուսումնական պլան
   i) Այլընտրանքային ուսումնական պլանի հատուկ ծրագրով օրվա ծրագիրը (SDP-Alt) այնպիսի միջավայր է, որը ծառայում է միջինից մինչև ծանր հաշմանդամություն ունեցող աշակերտներին. այն ազդում է աշակերտի ուսումնական, ոչ-ուսումնական, ճանաչողական և հարմարեցված/ամենօրյա ապրելակերպի գործառույթների վրա:
   ii) SDP- Այլընտրանքային ուսումնական պլանում ներառված աշակերտներին նշանակվում են հատուկ կրթության դասվարներ՝ դպրոցական օրվա մեծ մասի համար (ավելի քան 50%), և այդ ռոպեները հաշվարկվում են հանրակրթական ծրագրից դուրս:
   iii) Ավագ դպրոցում SDP-Այլընտրանքային ուսումնական պլանը նախատեսված է այն հաշմանդամ աշակերտների համար, ովքեր ներառված <u>չեն</u> «a-g» դասընթացի հաջորդականության մեջ կամ աշխատում են դիպլոմի շուրջ և փոխարենը պետք է աշխատեն ավարտական վկայականի համար:
   iv) Երբ հարմար և տեղին է, այն աշակերտները, ովքեր ներառված են SDP-Այլընտրանքային ուսումնական պլանում, կարող են ներառվել/ուղղորդվել հանրակրթական դասարաններ կամ ծրագրեր, որոնք համապատասխանում են նրանց IEP-ներին՝ հնարավորություններ ընձեռելու շփվել սովորական հասակակիցների հետ՝ նվազ սահմանափակ միջավայրում:

5) <u>Ոչ հանրային, ոչ աղանդավորական դպրոցի ծառայություններ</u>
   a. Ոչ հանրային, ոչ աղանդավորական դպրոց նշանակում է մասնավոր, ոչ աղանդավորական դպրոց, որը ներառում է բացառիկ կարիքներով անձանց՝ իրենց IEP-ի համաձայն, աշխատանքի է ընդունում համապատասխան վկայագրերով անձնակազմի, ովքեր արտոնագրված են հատուկ ծառայություններ մատուցելու և վկայագրված են նահանգի կողմից:
   b. Համայնքի կառավարող խորհուրդը կարող է պայմանագիր կնքել նահանգի կողմից վկայագրված ոչ-հանրային, ոչ-աղանդավորական դպրոցների կամ գործակալությունների հետ՝ հատուկ կրթության ծառայություններ մատուցելու, երբ համապատասխան հանրային կրթության ծրագիր մատչելի չէ:
   c. Ոչ-հանրային դպրոցների կամ գործակալությունների հետ կնքված պայմանագրերը երաշխիքներ են պարունակում, որ դպրոցը կամ գործակալությունը պետք է համապատասխանեն կիրառելի դաշնային և նահանգային օրենքներին և կարգավորումներին:
   d. Ոչ-հանրային, ոչ-աղանդավորական դպրոց փոխադրումը կվերանայվի ամեն տարի՝ IEP-ի հանդիպմանը:

6) <u>Նահանգային հատուկ դպրոցներ</u>
   a. Նահանգը երեք հատուկ դպրոց է աշխատեցնում Կալիֆորնիայում՝ Կալիֆորնիայի խուլերի դպրոցը Ռիվրսայդում (California School for the Deaf, Riverside), Կալիֆորնիայի խուլերի դպրոցը Ֆրեմոնթում (California School for the Deaf, Fremont), Կալիֆորնիայի կույրերի դպրոցը Ֆրեմոնթում (California School for the Blind, Fremont):
   b. Նահանգային հատուկ դպրոցները կարող են ի նկատի առնվել IEP թիմի կողմից, եթե համայնքում համապատասխան հանրակրթական ծրագիր մատչելի չէ:

7) <u>Երկարաձգված ուսումնական տարի</u>

Երկարաձգված դպրոցական տարվա ծառայությունները կտրամադրվեն բացառիկ կարիքներ ունցեող յուրաքանչյուր անձի, ով բացառիկ կարիքներ ունի և հատուկ կրթություն և առնչվող ծառայություններ է պահանջում՝ սովորական ուսումնական տարվանից ավելի շատ ժամանակում: Նման անհատներն այնպիսի հաշմանդամություն են ունենում, որոնք հավանաբար կշարունակվեն անորոշ կամ երկարաձգված ժամանակով, իսկ աշակերտի կրթական ծրագրի ընդհատումը կարող է հետադիմության պատճառ դառնալ, երբ համակցվի վերադարձելիության սահմանափակ ունակությամբ՝ այն անհնար կամ անհավանական դարձնելով, որ աշակերտը ձեռք կբերի ինքնաբավության և անկախության այն մակարդակը, որն այլկերպ կակնկալվեր իր հաշմանդամության խնդրի տեսանկյունից: Նման գործոնների հստակ ապացույցի բացակայության դեպքում կարող են չօգտագործվել՝ անձին մերժելու երկարաձգված ուսումնական տարվա համար, եթե IEP թիմը որոշի, որ նման ծրագրի կարիքը և երկարաձգված ուսումնական տարին ներառի IEP-ում:

a. Երկարաձգված տարով հատուկ կրթությունը և դրան առնչվող ծառայությունները կտրամադրվեն դպրոցական համայնքի, SELPA-ի կամ վարչաշրջանի գրասենյակի կողմից, որոնք սովորական ուսումնական տարվա ընթացքում ծրագրեր կառաջարկեն:

b. Բացառիկ կարիքներով անհատները, ովքեր կարող են երկարաձգված ուսումնական տարվա կարիք ունենալ, նրանք են, ովքեր՝

   i) Սովորում են հատուկ դասարաններում, կամ
   ii) Բացառիկ կարիքներով անհատներ են, ում IEP-ներում նշված է երկարաձգված տարվա ծրագիրը, որը որոշվել է IEP թիմի կողմից:

c. Երկարաձգված տարվա ծրագիրը, երբ անհրաժեշտ է, ինչպես որոշված է IEP թիմի կողմից, պետք է ներառվի աշակերտի IEP-ում:

8) <u>Վարքագծային միջամտություն</u>

Վարքագծային միջամտությունները, օժանդակությունները և այլ ռազմավարություններն օգտագործվում են աշակերտի ֆիզիկական ազատության և սոցիալական փոխազդեցության նկատառմանը, կիրառվում են այնպես, որ հարգեն մարդու անժանապատվությունը և անձնական գաղտնիությունը և երաշխավորում են աշակերտի՝ նվազ սահմանափակ կրթական միջավայրում տեղավորելու իրավունքը:

9) <u>Փոխադրում</u>

Փոխադրումը մատչելի է որպես առնչվող ծառայություն, եթե այն անհրաժեշտ է, որպեսզի աշակերտը FAPE ստանա: Այս որոշումը կայացնելիս, IEP թիմը պետք է ի նկատի ունենա՝ (1) աշակերտի կարիքները և (2) փոխադրման նվազ սահմանափակ տեսակ, որը հարմար է աշակերտին:

Փոխադրումը որպես առնչվող ծառայություն է տրամադրվում հաշմանդամ աշակերտներին, եթե գոյություն ունեն հետևյալ պայմանները՝

a. Աշակերտը համայնքի կողմից տեղավորվել է մի դպրոցում, որը տարբեր է իր բնակավայրի դպրոցից, որը համարվում է «տան դպրոց»: «Տան դպրոցը» սահմանվում է որպես աշակերտի բնակավայրի կամ ըստ ընտրության դպրոց:

b. Աշակերտի հաշմանդամությունը թույլ չի տալիս նրան այն նույն ձևով դպրոց

հաճախել, ինչպես իր ոչ-հաշմանդամ հասակակիցները: Եթե աշակերտը փոխադրման կարիք ունի, ապա հիմնավորումը պետք է ներառվի նրա IEP-ում:

Ո՞րն է նվազ սահմանափակ միջավայրում տեղավորումը:

IEP թիմը որոշում է տեղավորման կամ կրթական միջավայրի տեսակը, որը համապատասխան է՝ Ձեր երեխային տրամադրելու այն ուսուցումը, որի կարիքը նա ունի: Համապատասխան տեղավորումը որոշելիս IEP թիմը պետք է երաշխավորի, որ առավելագույնս հարմար է, որ Ձեր երեխան կրթվի իր ոչ-հաշմանդամ հասակակիցների հետ և որ հատուկ դասարանները, առանձին դպրոցները կամ տարիքին համապատասխան հանրակրթական դասարաններից հեռացման դեպքերը տեղի են ունենում միայն այն դեպքում, երբ հաշմանդամության բնույթը կամ ծանրությունն այնպիսին են, որ հանրակրթական դասարանում տրված կրթությունը՝ լրացուցիչ միջոցներով և ծառայություններով, չի կարող բավարարել՝ նպատակին հասնելու համար:

Տեղավորումների շարունակությունը՝ ավելի քիչից ավելի շատ սահմանափակ միջավայրեր ներառում է՝

Հանրակրթական դպրոցներ

- Հարմարություններով և փոփոխություններով հանրակրթական դասարան
- Լրացուցիչ միջոցներով և օժանդակություններով հանրակրթական դասարան
- Առնչվող ծառայություններով հանրակրթական դասարան
- Մասնագիտական ռեսուրսներով ծառայությունների հանրակրթական դասարան
- Հանրակրթական դասարան և հատուկ կրթության օրով ծրագիր

Հատուկ կրթության օրով ծրագիր

- Հատուկ դպրոցներ կամ կենտրոններ
- Հատուկ կրթության օրով ծրագիր

Ոչ-հանրային դպրոցներ

- Երկակի ներառում (հանրային և ոչ-հանրային դպրոցներ)
- Ոչ-հանրային դպրոց կամ կենտրոն

Տուն կամ հիվանդանոց

- Տնային կամ հիվանդանոցային ուսուցում

Բնակավայրային

- Նահանգային հատուկ դպրոց*
- Ոչ-հանրային դպրոց կամ կենտրոն

Ձեր երեխան կրթություն կստանա այն դպրոցում, որտեղ նա կհաճախի, եթե հաշմանդամ չէ, եթե IEP թիմը չորոշի, որ մեկ այլ վայր է պահանջվում՝ բավարարելու Ձեր երեխայի կարիքները, որոնք նշված են IEP-ում: Տեղանքը հնարավորինս մոտ կլինի

Ձեր տանը:

*Նահանգի հատուկ դպրոցները երեք հաստատություններում ծառայություններ են մատուցում այն աշակերտներին, ովքեր խուլ, լսողության դժվարություն, կույր, տեսողության դժվարություն կամ խուլ-կույր են՝ Կալիֆորնիայի խուլերի դպրոցները Ֆրեմոնթում և Ռիվրսայդում են, իսկ Կալիֆորնիայի կույրերի դպրոցը՝ Ֆրեմոնթում:

Գիշերօթիկ և սովորական դպրոցի ծրագրերն առաջարկվում են մանկական տարիքի երեխաներից մինչև 21 տարեկանը՝ նահանգի՝ խուլերի համար նախատեսված երկու դպրոցում և Կալիֆորնիայի կույրերի դպրոցում՝ հինգից մինչև 21 տարեկանների համար: Նահանգի հատուկ դպրոցները նաև գնահատման և տեխնիկական աջակցության ծրագրեր են առաջարկում: Նահանգային հատուկ դպրոցների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել Կալիֆորնիայի կրթության նախարարության կայքէջ՝ http://www.cde.ca.gov/sp/ss/ or կամ հարցնել Ձեր երեխայի IEP թիմի անդամներին:

Ե՞րբ են փոխադրման ծառայություններ տրամադրվում:

Որոշելու համար, թե արդյոք Ձեր երեխան դեպի դպրոց կամ արտադասարանական միջոցառումներին մասնակցելու համար փոխադրման կարիք ունի, թե ոչ, որոշվում է IEP թիմի կողմից: Փոխադրումը սովորաբար անհրաժեշտ է լինում, եթե հատուկ կրթության տեղավորումը, ծառայությունները կամ գործողությունները Ձեր երեխայի հաճախած դպրոցում չեն: Փոխադրումը նաև կարող է կարիք լինել անձնական գործոնների պատճառով, ինչպիսիք են առողջությունը, հասարակական դատողությունը կամ հաղորդակցման ունակության բացակայությունը, որն ազդում է Ձեր երեխայի ապահովության վրա: IEP թիմը նաև որոշում է, թե արդյոք ինչ հարմարությունների և փոփոխությունների կարիք կա, որպեսզի Ձեր երեխան ապահով փոխադրվի:

Փոխադրումը ծառայություն է, որը հիմնված է ճանաչված կարիքի վրա և չի տրամադրվում Ձեր կամ Ձեր երեխայի հարմարավետության համար: Այն նաև չի տրամադրվում, եթե Դուք առանց համայնքի հաստատման Ձեր երեխան դպրոց եք տեղավորում:

Երբ որ IEP թիմը որոշի, որ Ձեր երեխան փոխադրման կարիք ունի, Դուք ծանուցում կստանաք առ այն, թե որտեղից և երբ պետք է Ձեր երեխային վերցնեն և թողնեն: Այն կարող է մի քանի օր ավելի տևել, եթե մասնագիտացված սարքավորումներ կամ պատրաստությունների կարիք կա: Փոխադրման մասին հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք 1-(800) LA-BUSES կամ 1-(800) 522-8737 հեռախոսահամարներով:

Ի՞նչ տեղի կունենա, եթե երեխաս Medi-Cal-ից օգտվելու իրավունք ունի:

Medi-Cal-ի մասին հետևյալ տեղեկատվությունը տրամադրվում է այն հաշմանդամ աշակերտների ծնողներին, ովքեր Medi-Cal-ից օգտվելու իրավունք ունեն: Հաշմանդամ անձանց կրթության մասին օրենքի (Individuals with Disabilities Education Act (IDEA))կարգավորումների համաձայն Լոս Անջելեսի միավորված դպրոցական համայնքն անվճար տրամադրում է բոլոր անհրաժեշտ ծառայությունները, որոնք նշված են երեխայի IEP-ում: Սակայն, LAUSD-ը կարող է դաշնային կառավարության Medicaid ծրագրից փոխհատուցվել այդ ծառայությունների ծախսերի համար, որը բարձրացնում է LAUSD-ի բոլոր աշակերտներին առողջությանն առնչվող ծառայություններ տրամադրելու հնարավորությունը:

Առողջությանն առնչվող ծառայությունների տրամադրման արժեքը բարձր է: Դաշնային

կրթական հիմնադրամները ծածկում են ծախսերի մի մասը: 1986թ. Կոնգրեսը դպրոցներին լիազորեց Medicaid-ծրագրին հաշիվ ներկայացնելու (նշում. Կալիֆորնիայում Medicaid-ը կոչվում է Medi- Cal) առողջությանն առնչվող որոշակի ծառայությունների համար: Շատ երեխաներ և ընտանիքներ, ովքեր առողջապահական այլ ապահովագրություն չունեն, օգտվում են Medi-Cal հիմնադրամի կողմից դպրոցներին տրամադրված և օժանդակված ծառայություններից: Հաշմանդամ աշակերտների դեպքում դպրոցում հիմնված առողջապահական խնամքը առողջապահական խնամքի տրամադրման արդյունավետ և ազդեցիկ ձև է: Այն խնայում է ծնողների ժամանակը և ջանքերը, որոնք անհրաժեշտ են կլինիկաների և հիվանդանոցների միջև ճամփորդել՝ այս ծառայություններն ստանալու համար:

Medi-Cal-ի կողմից փոխհատուցող ծառայությունները ներկայումս ներառում են որոշակի առողջապահական ծառայություններ համայնքի բոլոր աշակերտների համար, ինչպես նաև առանձնահատուկ ծառայություններ հաշմանդամ աշակերտների համար: Հաշմանդամ աշակերտների առողջությանն առնչվող ծառայությունները ներառում են և՛ գնահատում և՛ բուժում(ներ), որոնք նշված են աշակերտի անհատականացված կրթական ծրագրում (IEP), այդ թվում՝ աուդիլոգիա, խորհրդատվություն, բուժքույրական ծառայություններ, օկուպացիոն թերապիա, ֆիզիոթերապիա, լոգոպեդիա և այս ծառայություններին առնչվող փոխադրում: Medi-Cal-ի կանոնակարգումները դպրոցում առկա մատակարարների համար սահմանում են այն նույն բարձր մասնագիտական չափանիշները, ինչը այն մատակարարների համար, ովքեր աշխատում են հիվանդանոցներում, վերականգնողական կենտրոններում և այլ հաստատություններում:

Medi-Cal-ի իրավունակ աշակերտների ծնողները լիազորում են LAUSD-ին՝ հայց ներկայացնելու Medi-Cal-ի կամ Medi-Cal-ի կողմից ֆինանսավորված ծառայությունների փոխհատուցման համար, երբ ծնողը համաձայնություն է ստորագրում Հատուկ կրթական գնահատման ծրագրում կամ IEP-ում: Հայցերի հաճախականությունը համընկնում է գնահատումների լիազորման և/կամ Medi-Cal –ի կողմից ֆինանսավորված ծառայությունների տեսակի կամ հաճախականության հետ, որը ծնողը լիազորում է աշակետի IEP-ում: Փոխհատուցում պահանջելիս LAUSD-ը կարող է կարիք ունենալ հրապարակել աշակերտի արձանագրությունները, բժշկական տեղեկությունները և/կամ այլ տեղեկություններ, որոնք պատկանում են աշակերտին: Medi-Cal-ի՝ դպրոցում հիմնված փոխհատուցումը չի ազդում երեխայի Medi-Cal-ի նպաստների վրա՝ առողջապահական խնամքի մեկ այլ հաստատությունում: Կալիֆորնիայում հաշմանդամ աշակերտների Medi-Cal-ի ծախսերի սահմանափակում չկա:
LAUSD-ն երբեք ընտանիքի անձնական ապահովագրական ընկերությանը հաշիվ չի ներկայացնում առողջապահական խնամքի ծախսերի համար, որոնք նշված են երեխայի IEP-ում: Համայնքը հավատարիմ է IDEA-ին և դրա պահանջին՝ հաշմանդամ աշակերտներին անվճար և համապատասխան հանրային կրթություն (FAPE) տրամադրելու: Medi-Cal-ի իրավունակ աշակերտների ծնողները լիազորում են LAUSD-ին՝ հայցեր ներկայացնելու Medi-Cal-ին՝ Medi-Cal-ի կողմից ֆինանսավորված ծառայությունների փոխհատուցման համար, եթե ծնողը չի ստորագրել «Ծնողի՝ Medi-Cal-ին հաշիվ ներկայացնելու չլիազորման ձևաթուղթը» (Parent Medi-Cal Non-Authorization to Bill form): Հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք 213-241-0558 հեռախոսահամարով:

Երեխաները Medi-Cal-ի իրավունք են ունենում՝ հիմնվելով տարբեր գործոնների վրա,

ներառյալ ընտանիքի եկամուտը և հաշմանդամությունը: Այն ծնողները, ովքեր հետաքրքրված են հավելյալ տեղեկություններ ձեռք բերել Medi-Cal-ի մասին, կարող են զանգահարել LAUSD CHAMP-ի ծնողների առողջապահական խնամքի անվճար թեժ գիծ՝1-866-742-2273 հեռախոսահամարով:

ՔԱՅԼ 4. IEP-ի վերանայում

Եթե Ձեր երեխան հատուկ կրթության ծառայություններ է ստանում, նրա IEP-ն կվերանայվի IEP թիմի հանդիպմանը՝ առնվազն տարին մեկ անգամ՝ որոշելու, թե որքան լավ է այն բավարարում նրա կարիքները: Բացի այդ, յուրաքանչյուր երեք տարին մեկ Ձեր երեխան կգնահատվի ըստ անհրաժեշտության:

Եթե մտահոգություններ կան, որ Ձեր երեխայի կրթական կարիքները չեն բավարարվում, կամ Դուք կամ դպրոցի անձնակազմը կարող եք տարվա ընթացքում որևէ պահի վերագնահատում կամ IEP թիմի հանդիպում պահանջել՝ վերանայելու IEP-ն: Դուք կարող եք IEP թիմի հանդիպում խնդրել՝ դպրոցին գրավոր խնդրանք ուղարկելով: Երբ որ Ձեր խնդրանքն ստացվի, հանդիպումը պետք է անցկացվի երեսուն (30) օրվա ընթացքում՝ չհաշված հինգ (5) օրից ավելի տևող դպրոցական արձակուրդը: Դուք կարող եք IEP թիմի հանդիպում խնդրել՝ դպրոցին գրավոր խնդրանք ներկայացնելով կամ լրացնելով *Հատուկ կրթության գնահատման խնդրանքի* ձևաթուղթը, որը կարելի է ձեռք բերել համայնքի ցանկացած դպրոցում: Դպրոցը պետք է Ձեր համաձայնությունն ստանա, նախքան Ձեր երեխային վերագնահատելը: Վերագնահատումները տարեկան մեկ անգամից ավելի տեղի չեն ունենա, եթե համայնքը չհամաձայնի, որ այն անհրաժեշտ է:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ՝ ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԵՐՔՈ

Բացի նախորդ էջերում նկարագրված իրավունքներից, Դուք ունեք նաև հետևյալ իրավունքները՝

- Գրավոր ծանուցում ստանալու Ձեր իրավունքը.
- Ձեր երեխային ներառող գործողություններին համաձայնելու Ձեր իրավունքը.
- Հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների շարունակական տրամադրման չեղարկման Ձեր համաձայնության իրավունքը.
- Ձեր երեխայի կրթական արձանագրություններից օգտվելու Ձեր իրավունքը.
- Ընթացակարգային երաշխիքներից օգտվելու Ձեր իրավունքը՝ լուծելու տարաձայնություններն առ այն, թե ինչն է հարմար Ձեր երեխայի համար.
- Բողոքարկելու Ձեր իրավունքը՝ օգտվելով բողոքարկման միասնական ընթացակարգերից.
- Խտրականությունից և հետապնդումից պաշտպանված լինելու Ձեր իրավունքը:

Գրավոր ծանուցում ստանալու Ձեր իրավունքը

Համայնքը Ձեզ ժամանակին գրավոր ծանուցում կտրամադրի՝ նախքան Ձեր երեխայի գնահատումն ընդունելը կամ մերժելը: Բացի այդ, Դուք կարող եք նախապես գրավոր ծանուցում ստանալ, եթե համայնքը մտադիր է փոխել կամ մերժում է փոխել Ձեր երեխայի նույնականացումը, կրթական տեղավորումը կամ հատուկ կրթության ծառայությունները:

Ծանուցումը կներառի՝

- Համայնքի կողմից ընդունված կամ մերժված գործողության նկարագրություն:
- Բացատրություն առ այն, թե գործողությունն ինչու ընդունվեց կամ մերժվեց:
- Որևէ այլ նկատի առնված ընտրանքի նկարագրություն և այդ ընտրանքները մերժելու պատճառները:
- Տեղեկատվության նկարագրություն, որն ընդունված կամ մերժված գործողության համար որպես հիմք է օգտագործվել:
- Որևէ այլ գործոնի նկարագրություն, որն առնչվում է ընդունված կամ մերժված գործողությանը:
- Ձևակերպում, որի համաձայն Դուք պաշտպանված եք այս ուղեցույցում նկարագրված ընթացակարգային երաշխիքներով:
- Տեղեկատվություն առ այն, թե ինչպես կարող եք ձեռք բերել այս ուղեցույցի պատճենը (որտեղ նկարագրվում են հատուկ կրթության ընթացակարգային երաշխիքները):

Դուք նաև նախապես կտեղեկացվեք Ձեր երեխայի կրթական ծրագրի կամ տեղավորման երկարաժամկետ փոփոխության մասին: Երկարաժամկետ փոփոխությունն այն փոփոխությունն է, որը տևում է ավելի քան տաս (10) դպրոցական օր: Սա ներառում է Ձեր երեխայի հեռացումը դպրոցից՝ ժամանակավոր դադարեցման կամ վտարման պատճառով:

Յուրաքանչյուր ծանուցում կգրվի այն լեզվով, որը հասկանալի է ընդհանուր հասարակությանը և կտրամադրվի Ձեր հիմնական լեզվով կամ հաղորդակցման այլ ձևով, եթե այն ակնհայտորեն հնարավոր չէ այդպես անել: Եթե հնարավոր չէ գրավոր ծանուցումը տրամադրել Ձեր հիմնական լեզվով կամ հաղորդակցման այլ կերպով, ծանուցումը բանավոր կամ այլ ձևով կթարգմանվի Ձեր հիմնական լեզվով կամ հաղորդակցման այլ միջոցներով:

Ձեր երեխային ներառող գործողություններին համաձայնելու Ձեր իրավունքը

Դուք պետք է տեղեկացված, գրավոր համաձայնություն տաք՝ նախքան Ձեր երեխայի հատուկ կրթության առաջին գնահատումը կարող է կատարվել և նախքան համայնքը կարող է հատուկ կրթության ծառայություններ տրամադրել Ձեր երեխային: Եթե Դուք մերժեք համաձայնել նախնական ծառայությունների տրամադրմանը, համայնքը չի կարողանա չեղյալ հայտարարել Ձեր համաձանյության բացակայությունը և դա օրենքի խախտում չի համարվի, եթե այն չտրամադրի առաջարկվող ծառայությունները:

Վերագնահատումների դեպքում համայնքը պատշաճ փորձեր կձեռնարկի՝ Ձեր համաձայնությունը ձեռք բերելու համար: Եթե Դուք չարձագանքեք այս պատշաճ փորձերին, համայնքը կարող է շարունակել և վերագնահատում անցկացնել՝ առանց Ձեր համաձայնության: Եթե Դուք մերժեք համաձայնել, համայնքը կարող է պատշաճ իրավական գործընթաց խնդրել՝ վարչական դատավորից որոշում ձեռք բերելու, որով թույլ կտրվի առանց ծնողի համաձայնության գնահատում անցկացնել: Սակայն, համայնքը չի կարող չեղյալ հայտարարել Ձեր համաձայնության բացակայությունը, եթե Դուք Ձեր երեխային մասնավոր դպրոց եք ներառել՝ Ձեր սեփական ծախսերով կամ եթե

Ձեր երեխան տնային ուսուցում է ստանում:

Կան նաև այլ դեպքեր, երբ համայնքը Ձեր համաձայնության կարիքը կունենա: Օրինակ՝ մինչ Ձեր երեխայի կրթական արձանագրությունները Ձեր ներկայացուցչին ներկայացնելը, համայնքը Ձեր գրավոր համաձայնության կարիքը կունենա: Այս դեպքում համայնքը կնշի, թե ինչ արձանագրություններ դուրս կտրվեն և ում: Համայնքը կխնդրի Ձեր համաձայնությունը միայն այն գործողությունների համար, որոնք սահմանված են օրենքով:

Երբ Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը, դա նշանակում է, որ՝

- Դուք ամբողջությամբ տեղեկացված եք եղել ողջ տեղեկատվության մասին՝ Ձեր հիմնական լեզվով կամ հաղորդակցման այլ ձևով:
- Դուք հասկանում եք, թե ինչ է խնդրվում և համաձայն եք, որ համայնքը կարող է կատարել այն գործողությունը, որի համար պահանջվում է համաձայնությունը:
- Դուք հասկանում եք, որ Ձեր համաձայնությունը տրամադրելը կամընտրական է և որ Դուք կարող եք որևէ պահի փոխել Ձեր մտադրությունը:

Համայնքից չի պահանջվում ձեռք բերել Ձեր համաձայնությունը՝ նախքան գոյություն ունեցող տվյալների վերանայումը՝ որպես Ձեր երեխայի գնահատման կամ վերագնահատման մի մաս, կամ երբ Ձեր երեխային թեստ եք տալիս, որը տրամադրվում է բոլոր երեխաներին, եթե բոլոր ծնողներից համաձայնություն չի պահանջվում:

Հնարավոր է, որ Ձեր դպրոցը չօգտագործի համաձայնության Ձեր մերժումը՝ ծառայության կամ գործողության համար՝ մերժելու Ձեզ կամ Ձեր երեխայի որևէ այլ ծառայություն, նպաստ կամ գործողություն:

Հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների շարունակական տրամադրման չեղարկման Ձեր համաձայնության իրավունքը

Հատուկ կրթության և դրանց առնչվող ծառայությունների նախնական տրամադրումից հետո որևէ պահի Դուք իրավունք ունեք գրավոր կերպով չեղարկելու համաձայնությունը՝ Ձեր երեխային հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների շարունակական տրամադրման համար: Եթե Դուք չեղարկեք համաձայնությունը, հնարավոր է, որ համայնքը չշարունակի հատուկ կրթություն և դրան առնչվող ծառայություններ տրամադրել Ձեր երեխային: Համայնքը, սակայն, պետք է նախապես գրավոր ծանուցում տրամադրի՝ նախքան հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների դադարեցումը:

Ձեր երեխայի կրթական արձանագրություններից օգտվելու Ձեր իրավունքը

Կրթական արձանագրությունները Ձեր երեխային վերաբերող տեղեկատվության կարևոր աղբյուր են: Դրանք տեղեկություններ են ներառում նրա հաշմանդամ աշակերտ ճանաչվելու, գնահատման արդյունքների և կրթական տեղավորման և ծառայությունների մասին: Այս արձանագրությունները գաղտնի են:

Դուք ունեք հետևյալ իրավունքները, որոնք վերաբերում են Ձեր երեխայի դպրոցական արձանագրություններին.

- Ձնելու և վերանայելու Ձեր երեխայի արձանագրությունները՝ խնդրանքը ներկայացնելուց հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև

որևէ հանդիպումից առաջ, որը վերաբերում է Ձեր երեխայի IEP-ին կամ որևէ լսման, որն առնչվում է Ձեր երեխայի նույնականացմանը, գնահատմանը, կրթական տեղադրմանը կամ հատուկ կրթության ծառայություններին: Համայնքը Ձեզնից գումար չի գանձի որոնման կամ Ձեր երեխայի վերաբերյալ տեղեկատվության որոնման համար:

- Ձեր գրավոր կամ բանավոր խնդրանից հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում ստանալու Ձեր երեխայի արձանագրությունները: Համայնքը կարող է Ձեզնից գանձել այս արձանագրությունները պատճենելու փաստացի գումարը, բայց եթե այս ծախսը կանխարգելում է նման պատճեններն ստանալու Ձեր իրավունքը, ապա պատճեններն անվճար կարվեն:
- Հիմնավորված խնդրանքի պատասխան ստանալու՝ արձանագրությունների բացատրության և մեկնաբանման համար:
- Թույլ տալու Ձեր ներկայացուցիչին քննելու և վերանայելու արձանագրությունները:
- Խնդրանքի դեպքում տեղեկացված լինելու կրթական արձանագրությունների հավաքման, պահպանման և դպրոցի կողմից օգտագործման տեսակների և տեղանքների մասին:

Այս իրավունքները կիրառելի են բոլոր այն արձանագրություններին դեպքում, որոնք տնօրինվում են բոլոր հանրային գործակալությունների կողմից, որոնք կրթությանն առնչվող ծառայություններ են մատուցում հաշմանդամ աշակերտներին և նրանց, ովքեր հաշմանդամ աշակերտներ են կրթում հիվանդանոցներում կամ զարգացման կենտրոններում, ինչպես նաև երիտասարդների և չափահասների հաստատություններում:

Քանի որ դրանք աշակերտների գաղտնի արձանագրություններն են, Ձեր երեխայի IEP-ն և հատուկ կրթության այլ փաստաթղթերը մատչելի կլինեն միայն նրանց, ովքեր լիազորված են՝ Դաշնային կրթական իրավունքների և գաղտնիության օրենքի (FERPA) համաձայն, ինչպես օրինակ անձնակազմը, որը պատասխանատու է Ձեր երեխայի կրթական ծրագիրն իրականացնելու, ինչպես նաև այն անձինք և գործակալությունները, ովքեր կարիք ունեն օգտվելու այս տեղեկատվությունից՝ համապատասխանելու դաշնային և նահանգային օրենքներին և կանոնակարգերին: Ձեր համաձայնությունը պետք է ձեռք բերվի՝ մինչ Ձեր երեխայի արձանագրությունները կբացահայտվեն որևէ անձի կամ գործակալության, որոնք լիազորված չեն FERPA-ի ներքո:

Համայնքը և այլ համապատասխան հանրային գործակալություններ պահում են անհատների արձանագրություններ, բացի ծնողներից և համայնքի լիազորված աշխատակիցներից, ովքեր օգտվում են աշակերտի կրթական արձանագրություններից: Այս արձանագրությունը ներառում է տեղեկատվությունից օգտվող անձանց անունները, ամսաթիվը, երբ օգտվելու թույլտվություն է տրվել և նպատակը, որի համար նրանք լիազորվել են օգտվել արձանագրություններից:

Ենթադրվում է, որ Դուք՝ որպես ծնող կամ խնամակալ, լիազորություն ունեք՝ քննելու և վերանայելու Ձեր երեխային վերաբերող արձանագրությունները, եթե համայնքն այլ կերպ չի տեղեկացվել:

Եթե որևէ կրթական արձանագրություն ներառի Ձեր երեխայից բացի այլ երեխայի կամ երեխաների վերաբերող տեղեկատվություն, Դուք իրավունք ունեք քննելու և

վերանայելու միայն Ձեր երեխային վերաբերող տեղեկատվությունը կամ տեղեկացվել այդ առանձնահատուկ տեղեկատվության մասին:

Հատուկ կրթության արձանագրությունները պահպանվում են համայնքի կողմից հինգ (5) տարով՝ աշակերտի դպրոցական ծրագիրն ավարտելուց հետո, որից հետո դրանք ոչնչացվում են:

Եթե կարծում եք, որ Ձեր երեխայի արձանագրությունները տեղեկություններ են պարունակում, որոնք սխալ, մոլորեցնող են կամ խախտում են Ձեր երեխայի գաղտնիության կամ այլ իրավունքները, Դուք կարող եք համայնքին խնդրել՝ փոխել տեղեկատվությունը: Համայնքը կորոշի, թե արդյոք կատարի կամ չկատարի Ձեր խնդրանքը՝ Ձեր խնդրանքն ստանալուց հետո ընկած ողջամիտ ժամկետներում: Եթե համայնքը մերժի փոխել տեղեկատվությունը, Դուք այդ որոշման և այդ խնդրին առնչվող լսման Ձեր իրավունքի մասին ծանուցում կստանաք:

Խնդրանքի դեպքում համայնքը Ձեզ լսման հնարավորություն կընձեռի՝ վիճարկելու Ձեր երեխայի կրթական արձանագրություններում առկա տեղեկատվությունը: Եթե լսման որոշումը ի օգուտ Ձեզ լինի, համայնքը համապատասխանաբար կփոխի տեղեկատվությունը և այդ մասին Ձեզ գրավոր կտեղեկացնի:

Եթե լսման որոշումն ի օգուտ Ձեզ չէ, Դուք իրավունք ունեք Ձեր երեխայի արձանագրություններում տեղեկատվությանը վերաբերող Ձեր առարկությունների վերաբերյալ գրավոր ձևակերպում ներառել: Այս ձևակերպումը Ձեր երեխայի դպրոցի արձանագրության մաս կկազմի, մինչև որ առարկված տեղեկատվությունը կճշտվի կամ կհեռացվի: Եթե Ձեր երեխայի արձանագրությունները կամ վիճարկված տեղեկատվությունը բացահայտվի որևէ մեկի, Ձեր գրավոր ձևակերպումը ևս կբացահայտվի:

Ընթացակարգային երաշխիքներից օգտվելու Ձեր իրավունքը՝ լուծելու տարաձայնություններն առ այն, թե ինչն է հարմար Ձեր երեխայի համար

Եթե Ձեր երեխայի գնահատման կամ IEP-ի մասին անհամաձայնություն կա, Դուք իրավունք ունեք բարձրաձայնել Ձեր մտահոգությունների մասին: Դուք միշտ ընտրանք ունեք Ձեր մտահոգությունները քննարկելու համայնքի անձնակազմի հետ՝ Ձեր երեխայի դպրոցում՝ որևէ տարաձայնություն հարթելու համար: Եթե Դուք գրավոր համաձայնում եք, որպեսզի Ձեր երեխան հատուկ կրթություն և դրան առնչվող ծառայություններ ստանա, բայց չեք համաձայնում IEP-ի բոլոր բաղադրիչներին, այն բաղադրիչներին, որոնց հետ Դուք համաձայն եք, կիրականացվեն, որպեսզի չհետաձգվի Ձեր երեխային ուսուցում և ծառայություններ տրամադրելը: Ձեզնից չի պահանջվում նախաձեռնել վեճի լուծման որևէ ձև, որը վերաբերում է IEP-ի այն բաղադրիչին, որին Դուք համաձայն չեք: Եթե ցանկանում եք վեճի լուծման գործընթաց նախաձեռնել, Դուք կարող եք ընտրել ստորև նշվածներից որևէ մեկը:

Վեճի ոչ պաշտոնական լուծում (IDR)

Վեճի ոչ պաշտոնական լուծումը կամ «IDR»-ն վեճի լուծման գործընթաց է, որը մատչելի է ծնողների համար: IDR-ը համայնքային գործընթաց է, որը նախատեսված է ավելի արագ, ավելի քիչ պաշտոնական և ավելի քիչ հակասական լինելու, քան միջնորդությունը և պատշաճ գործընթացի վարույթը: IDR գործընթացը ծնողներին հնարավորություն է տալիս նշել իրենց խնդիրները և մտահոգությունները և աշխատել համայնքի վարիչ(ներ)ի հետ՝ փորձելու լուծել նշված խնդիրները:

Եթե Դուք համաձայն չեք Ձեր երեխայի առաջարկվող IEP-ի հետ և ցանկանում եք օգտվել IDR գործընթացից՝ լուծելու տարաձայնությունը, խնդրում ենք ծանուցել IEP-ի պատասխանատու պաշտոնյային/նշանակված անձին: Ձեր մտահոգությունները հասցեագրելուն աջակցելու համար, խնդրում ենք IEP թիմի հանդիպումից հետո հնարավորինս շուտ Ձեր խնդիրները և մտահոգությունները քննարկել IEP-ի պատասխանատու պաշտոնյայի/նշանակված անձի հետ:

Եթե IDR գործընթացի ժամանակ պայմանագրի ժամկետն ավարտվի, ապա պայմանագրի դրույթները կարող են գրավոր ներկայացվել և ստորագրվել երկու կողմերի կողմից և/կամ IEP թիմի հանդիպումը կարող է կազմակերպվել՝ պայմանագրի դրույթները միավորելու համար: IDR խնդրելը Ձեզ չի զրկում վեճի լուծման մեկ այլ ընտրանք խնդրելու հնարավորությունից:Պատշաճ գործընթացի վարույթ

Պատշաճ գործընթացի վարույթները վեճի լուծման գործընթացներ են, որոնք պահանջվում են մատչելի լինել ծնողներին և դպրոցական համայնքներին՝ հաշմանդամ անձանց կրթության մասին օրենքի (IDEA) համաձայն: Դուք կամ համայնքը կարող եք պատշաճ գործընթացի գանգատ ներկայացնել որևէ հարցի շուրջ, որը վերաբերում է Ձեր երեխայի նույնականացման, գնահատման կամ կրթական տեղավորման փոփոխություն նախաձեռնելու ընդունմանը կամ մերժմանը կամ Ձեր երեխայի համար համապատասխան անվճար հանրային կրթության (FAPE) ապահովմանը:

a) Վարույթն սկսվում է գանգատի ծանուցման ներկայացմամբ: Վարչական լսումների գրասենյակը («OAH») նահանգային գործակալություն է, որը կառավարում է Կալիֆորնիա նահանգի պատշաճ գործընթացի վարույթները: Պատշաճ գործընթացի վարույթները ներառում են միայն միջնորդության և պատշաճ գործընթացի լսումների խնդրանքները:**Միայն միջնորդություն**

«Միայն միջնորդությունը» վեճի լուծման կամընտրական գործընթաց է, որտեղ չեզոք միջնորդն աջակցում է Ձեզ և համայնքին՝ քննարկելու և փորձելու լուծել տարաձայնությունը: Միջնորդները համայնքի աշխատակիցներ չեն և տարաձայնության մեջ որևէ անձնական շահ չունեն: Միջնորդներն ընտրվում են Նահանգի կողմից՝ անկողմնակալ հիմունքներով և տեղյակ են այն օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների տրամադրմանը: Միայն միջնորդություն գործընթացը ներառում է միջնորդության համաժողով, որին մասնակցում եք Դուք, նշանակված միջնորդը և համայնքի ներկայացուցիչը, ով որոշում կայացնելու լիազորություն ունի:

Միայն միջնորդություն խնդրելու համար Դուք լրացրեք «Միայն միջնորդության հայցի խնդրանք», որը մատչելի է առցանց՝
http://www.dgs.ca.gov/oah/Home/Forms.aspx.
Ձևաթուղթը լրացնելուց հետո դաշնային և նահանգային օրենքները կպահանջեն, որ Դուք պատճեն ուղարկեք նշված յուրաքանչյուր կողմին և OAH-ին բողոք ներկայացնեք:

Շրջանին բողոքի պատճենը տրամադրելու համար՝ Դուք պետք է բողոքը փոստով կամ ֆաքսով ներկայացնեք, հետևյալ հասցեով՝

Due Process Department
Division of Special Education
Los Angeles Unified School District
333 South Beaudry Avenue, 17th Floor
Los Angeles, CA 90017
Fax: (213) 241-8917

OAH-ին բողոք ներկայացնելու համար փաստաթուղթը պետք է ինտերնետով ուղարկվի՝ օգտագործելով OAH-ի ինտերնետով փոխանցման ապահով (SFT) համակարգը, փոստով ուղարկվի, ձեռքով տրամադրվի կամ գիշերվա ընթացքում ուղարկվի OAH-ի գրասենյակներ՝ Սակրամենտո, Կալիֆորնիա: OAH-ն այլևս ֆաքսի փոխանցմամբ որևէ փաստաթուղթ չի ընդունում: Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ OAH-ի SFT-ից օգտվելու համար Դուք պետք է էլ.փոստի հասցե ունենաք: Եթե Դուք էլ.փոստի հասցե չունեք կամ ի վիճակի չեք SFT-ից օգտվել, խնդրում ենք աջակցության համար դիմել OAH՝

Office of Administrative Hearings
Attention: Special Education Division
2349 Gateway Oaks Drive, Suite 200
Sacramento, CA 95833
Հեռախոս՝ (916) 263-0880

Կայք էջ՝ http://www.dgs.ca.gov/oah/SpecialEducation.aspx
Ֆայլերի ապահով փոխանցում՝ https://www.dgsapps.dgs.ca.gov/OAH/OAHSFTWeb

Միայն միջնորդության Ձեր խնդրանքն ստանալուց հետո OAH-ը միջնորդության համաժողով կպլանավորի:

Փաստաբանները և վճարված դատապաշտպանները կարող են չմասնակցել միջնորդության համաժողովին, որն անցկացվում է Միայն միջնորդություն գործընթացի ընթացքում: Միջնորդության համաժողովին, միջնորդը կօգնի Ձեզ և համայնքին՝ հասկանալու միմյանց տեսակետները: Միջնորդը նաև կարող է տարբերակներ առաջարկել Ձեզ և համայնքին՝ ի նկատի ունենալու: Այն ինչ կասվի միջնորդության համաժողովին, գաղտնի է և չի կարող օգտագործվել պատշաճ գործընթացի որևէ լսմանը կամ քաղաքացիական վարույթում: Եթե Դուք և համայնքը համաձայնության գաք, համաձայնության դրույթները գրի կառնվեն և պետք է ստորագրվեն Ձեր և համայնքի ներկայացուցչի կողմից: Երբ որ համաձայնությունն ստորագրվի, այն դատական կարգով հարկադրաբար կիրառելի կլինի նահանգային և դաշնային օրենքով:

Միայն միջնորդությունը խնդրելը չի խանգարում, որպեսզի Դուք կամ համայնքը պատշաճ գործընթացի լսում խնդրեք: Եթե Միայն միջնորդություն գործընթացը չլուծի տարաձայնությունը, Դուք կամ համայնքը կարող եք Միջնորդության և պատշաճ գործընթացի լսման հայց ներկայացնել:**Պատշաճ գործընթացի լսման խնդրանք**

Պատշաճ գործընթացի լսման խնդրանքն

սկսվում է գանգատի ծանուցման ներկայացումից և ներառում է լուծման ժամանակաշրջան՝ լուծման պարտադիր հանդիպմամբ, ընտրանքային միջնորդությամբ և պատշաճ գործընթացի լսմամբ՝ լսման անկողմնակալ պաշտոնյայի առջև: Վարչական լսումների գրասենյակը (OAH) կորոշի, թե արդյոք գործը «արագացված» է (տեղի կունենա շատ լսումներից ավելի արագ ժամկետներում)՝ օրենքի վրա հիմնվելով: Շրջանը լուծման նստաշրջանի հանդիպում է գումարում, իսկOAH-ն անցկացնում է ընտրանքային միջնորդությունը և պատշաճ գործընթացի լսումը: Հնարավոր է, որ կարիք չլինի ողջ վարույթով մեկ անցնել՝ լուծման հասնելու համար: Պատշաճ գործընթացի բողոքը կարող է լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ վարույթի որևէ փուլում:

Շրջանից պահանջվում է պատշաճ գործընթացի խնդրանք նախաձեռնել, եթե համայնքը որոշի, որ հատուկ կրթության առաջարկվող ծրագրի բաղադրիչը, որին Դուք համաձայն չեք, անհրաժեշտ է՝ Ձեր երեխային համապատասխան անվճար հանրային կրթություն տրամադրելու համար: Սրա բացառումը մի իրավիճակ է, երբ Դուք չեք պատասխանում կամ համաձայնում եք Ձեր երեխային հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների նախնական տրամադրմանը:

Մինչ լուծման նստաշրջանը, միջնորդության համաժողովը կամ պատշաճ գործընթացի լսումն առկախ է, Ձեր երեխան կմնա իր ներկայիս տեղադրմանը, եթե Դուք կամ համայնքը այլ կերպ չհամաձայնեք: Եթե պատշաճ գործընթացի լսում անցկացվի, լսման որոշումը պարտադրի կլինի կողմերի համար:

<u>Միջնորդության և պատշաճ գործընթացի լսման խնդրանքի ներկայացում</u>
Պատշաճ գործընթացի լսում խնդրելու համար, խնդրում ենք լրացնել «Միջնորդության և պատշաճ գործընթացի լսման խնդրանքի» ձևաթուղթը, որը մատչելի է առցանց՝ http://www.dgs.ca.gov/oah/Home/Forms.aspx. հասցեով: Եթե նախընտրում եք, կարող եք գանգատի մասին գրավոր ծանուցում ներկայացնել, որը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝(1) երեխայի անունը, (2) երեխայի բնակության վայրի հասցեն կամ երեխայի մատչելի կոնտակտային տվյալներ, եթե երեխան անտուն է, (3) այն դպրոցի անունը, ուր երեխան հաճախում է, (4) խնդրի բնույթի նկարագրությունը և (5) առաջարկվող լուծում խնդրին այնքանով, որքանով այդ պահին հայտնի և մատչելի է: Ձևաթուղթը լրացնելուց հետո դաշնային և նահանգային օրենքները կպահանջեն, որ Դուք պատճեն ուղարկեք նշված յուրաքանչյուր կողմին և OAH-ին բողոք ներկայացնեք:

Շրջանին բողոքի պատճենը տրամադրելու համար՝ Դուք պետք է բողոքը փոստով կամ ֆաքսով ներկայացնեք, հետևյալ հասցեով՝

Due Process Department
Division of Special Education
Los Angeles Unified School District
333 South Beaudry Avenue, 17th Floor
Los Angeles, CA 90017
Fax: (213) 241-8917

OAH-ին բողոք ներկայացնելու համար փաստաթուղթը պետք է ինտերնետով ուղարկվի՝ օգտագործելով OAH-ի ինտերնետով փոխանցման ապահով (SFT) համակարգը, փոստով ուղարկվի, առձեռն տրամադրվի կամ գիշերվա ընթացքում ուղարկվի OAH-ի գրասենյակներ՝ Սակրամենտո, Կալիֆորնիա: OAH-ն այլևս ֆաքսի փոխանցմամբ որևէ փաստաթուղթ չի ընդունում: Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ OAH-ի SFT-ից օգտվելու համար Դուք պետք է էլ.փոստի հասցե ունենաք: Եթե Դուք էլ.փոստի հասցե չունեք կամ ի վիճակի չեք SFT-ից օգտվել, խնդրում ենք աջակցության համար դիմել OAH՝

Office of Administrative Hearings
Attention: Special Education Division
2349 Gateway Oaks Drive, Suite 200
Sacramento, CA 95833
Phone: (916) 263-0880
Կայքէջ՝ http://www.dgs.ca.gov/oah/SpecialEducation.aspx

Ֆայլերի ապահով փոխանցում՝ https://www.dgsapps.dgs.ca.gov/OAH/OAHSFTWeb

Միջնորդության և պատշաճ գործընթացի լսման խնդրանքի անհրաժեշտ

բաղադրիչներին վերաբերող լրացուցիչ տեղեկությունները մատչելի են OAH-ի կայքէջում՝ www.oah.dgs.ca.gov:

Որպեսզի գանգատարկումն առաջ ընթանա, այն պետք է պարունակի վերը նշված պահանջվող տեղեկատվությունը: Գանգատարկման ծանուցումն ստանալուց հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում, կողմը, որն ստացել է գանգատարկման ծանուցումը (այսինքն համայնքը, եթե Դուք եք ներկայացրել) կարող է առարկություն ներկայացնել գանգատարկման ծանուցմանն այն հիմքով, որ գանգատարկման ծանուցումը չի պարունակում օրենքով պահանջվող տեղեկությունները: Եթե առարկություն ներկայացվի, OAH-ն պետք է հինգ (5) օրվա ընթացքում որոշում կայացնի ծանուցման հիմնավորվածության վերաբերյալ և երկու կողմերին գրավոր ծանուցում տրամադրի որոշման վերաբերյալ:

Դուք կարող եք Ձեր գանգատարկման ծանուցման մեջ փոփոխություններ կատարել, եթե միայն՝(1) համայնքը գրավոր կերպով հաստատի փոփոխությունները և համայնքին հնարավորություն տրվի պատշաճ գործընթացի գանգատարկումը լուծել վեճերի լուծման հանդիպման միջոցով կամ (2) լսման պատասխանատուն Ձեզ թույլ տա փոխել Ձեր գանգատը՝ պատշաճ գործընթացի լսումն սկսելուց ոչ ուշ, քան հինգ (5) օր առաջ: Դուք չեք կարողանա Ձեր գանգատարկման ծանուցումը փոխել լսումն սկսելուց հետո:

Եթե Դուք փոփոխություններ կատարեք Ձեր գանգատարկման մեջ, Ձեզնից կպահանջվի գանգատարկման փոփոխված ծանուցում ներկայացնել: Երբ որ Դուք ներկայացնեք գանգատարկման փոփոխված ծանուցումը, լուծման ժամանակահատվածի և լուծման նստաշրջանի (նկարագրված է հաջորդ բաժնում) ժամանակացույցը կրկին կսկսի:

Լուծման ժամանակահատված

2004թ. հաշմանդամ անձանց կրթության բարեփոխման մասին օրենքը (IDEA 2004) լուծման երեսուն (30) օր ժամանակահատված է սահմանում, որը նախորդում է պատշաճ գործընթացի լսման սկզբին: Լուծման այս ժամանակահատվածը նպատակ ունի ծնողներին և դպրոցին մեծացված հնարավորություններ տրամադրել՝ տարաձայնությունները դրական և կառուցողական ձևերով լուծելու համար: Ինչ վերաբերում է լուծման ժամանակահատվածին, IDEA 2004-ը ներառում է հետևյալ ընթացակարգերը.

Եթե համայնքը Ձեզ նախապես գրավոր ծանուցում չի ուղարկել վեճի առարկա IEP-ի վերաբերյալ, ապա համայնքից պահանջվում է Ձեր գանգատին գրավոր պատասխան ուղարկել Միջնորդության և պատշաճ գործընթացի լսման խնդրանքն ստանալու ամսաթվից սկսած տաս (10) օրվա ընթացքում: Շրջանի պատասխանը, ի թիվս այլ բաների, կներառի բացատրություն առ այն, թե ինչու համայնքն ընդունեց կամ մերժեց կատարելու այն գործողությունը, որը բարձրացվել էր գանգատարկման ծանուցման մեջ, ի նկատի առնված ընտրանքների քննարկում, ինչպես նաև այն տեղեկատվության նկարագրությունը, որը համայնքն օգտագործել էր՝ որոշումը կայացնելու համար: Պատասխանը նաև ներառում է առաջարկվող լուծում կամ գործողություն (օրինակ՝ կրկին IEP թիմի ժողովի գումարումը)՝ անդրադառնալու գանգատարկման ծանուցման մեջ բարձրացված խնդիրներին:

Համայնքի կողմից գանգատարկման ծանուցումն ստանալուց հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում համայնքը լուծման նստաշրջան կպլանավորի, եթե Դուք և համայնքը գրավոր կերպով չհամաձայնեք հրաժարվել հանդիպումից կամ չհամաձայնեք փոխարենն օգտվել միջնորդության գործընթացից: Բացի այն դեպքերից, երբ Դուք և համայնքը գրավոր կերպով

համաձայնել եք հրաժարվել լուծման նստաշրջանից, եթե Դուք չմասնակցեք լուծման նստաշրջանին, ապա այդ դեպքում այն կհետաձգի լուծման գործընթացի ժամանակացույցը և պատշաճ գործընթացի լսումը: Ավելին, եթե Դուք չմասնակցեք լուծման նստաշրջանին այն բանից հետո, երբ համայնքի մի քանի անգամ փորձել է նստաշրջան պլանավորել, համայնքը կարող է խնդրել, որ OAH-ն կասեցնի Ձեր պատշաճ գործընթացի գանգատարկումը: Եթե գանգատարկման մասին Ձեր ծանուցումն ստանալուց հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում համայնքը չպլանավորի լուծման նստաշրջանը, կամ չմասնակցի լուծման նստաշրջանին, Դուք կարող եք OAH-ին խնդրել, որպեսզի հրահանգ տրվի առ այն, որ պատշաճ գործընթացի լսման ժամանակացույցն սկսվում է նախքան լուծման երեսուն (30) օր ժամանակահատվածի ավարտը:

Լուծման նստաշրջանի նպատակն է քննարկել Ձեր գանգատը և համայնքին հնարավորություն ընձեռել վեճը լուծել: Լուծման նստաշրջանը կներառի IEP-ի համապատասխան անդամի կամ անդամների, համայնքի ներկայացուցչի, ով որոշումներ կայացնելու լիազորություն ունի և Ձեզ: Համայնքը կարող է ներկա գտնվող փաստաբան չունենալ, եթե Դուք ներկա գտնվող փաստաբան չունեք: Եթե լուծման նստաշրջանին լուծում գտնվի, ապա կողմերը պետք է իրավաբանորեն պարտավորեցնող լուծման գրավոր համաձայնություն կազմեն, որը դատական կարգով հարկադրաբար կիրառելի է: Կողմերից որևէ մեկը կարող է համաձայնությունը երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում չեղյալ հայտարարել՝ սկսած դրա ստորագրման ամսաթվից:

Եթե Ձեր գանգատի լուծումը Ձեզ չի բավարարում, ապա երեսուն (30) օրվա ընթացքում՝սկսած այն պահից, երբ համայնքն ստացել է գանգատարկման ծանուցումը, պատշաճ գործընթացի լսում կարող է տեղի ունենալ և պատշաճ գործընթացի լուծման բոլոր կիրառելի ժամանակացույցերը կսկսվեն:

Ընտրանքային միջնորդություն

Նախքան պատշաճ գործընթացի լսումը, կողմերը կարող են որոշել մասնակցել միջնորդության համաժողովին: Այս նախալսման համաժողովը նման է այն համաժողովին, որն անցկացվեց Միայն միջնորդություն գործընթացի ժամանակ, բացառությամբ, որ փաստաբանները կարող են մասնակցել նախալսման միջնորդության համաժողովին: Երբ որ նախալսման միջնորդության համաժողով պահանջվի, կողմերը կնշեն պատշաճ գործընթացի խնդրո առարկան և համագործակցելով Ձեզ հետ ժամ ու ամսաթիվ կպլանավորի՝ միջնորդության համար, իսկ OAH-ն միջնորդ կնշանակի: Միջնորդի դերն է աջակցել Ձեզ և համայնքին՝ լուծելու այն տարաձայնությունը, որը վերաբերում է Ձեր երեխայի IEP-ին: Եթե միջնորդության համաժողովի ընթացքում համաձայնություն ձեռք բերվի, համաձայնության դրույթները կգրվեն կարգավորման համաձայնության մեջ, որը դատական կարգով հարկադրաբար կիրառելի կդառնա, երբ ստորագրվի Ձեր և համայնքի ներկայացուցչի կողմից: Եթե միջնորդության համաժողովը համաձայնության չհանգեցնի, խնդրի կշարունակվի լսմանը:

Պատշաճ գործընթացի լսում

Պատշաճ գործընթացի լսումը լուծման ավելի պաշտոնական գործընթաց է: Այն անցկացվում է OAH-ի վարչական դատավորի կամ «լսման պաշտոնյայի» կողմից: Ըստ ընթացակարգի լսումը դատավարության պես է: Ապացույցը ներկայացվում է, և վկաները ցուցմունքներ են տալիս և խաչաձև հարցաքննվում: Լսման պատասխանատուները կարող են հարցեր տալ վկաներին, փորձագետներ ունենալ, որոնք խնդիրները միասին կքննարկեն, այցելել տեղադրման վայրեր, զանգահարել վկաներին և անկախ գնահատումներ պատվիրել: Լսումը կկենտրոնանա այն խնդիրների վրա, որոնք ճանաչվել են պատշաճ գործընթացի լսման խնդրանքում, որը կարող է ներառել, թե արդյոք Ձեր

երեխան ստացել է կամ նրան առաջարկվել է անվճար և համապատասխան հանրային կրթություն (FAPE)՝ նահանգային և դաշնային օրենքի համաձայն:

Ընթացակարգային խախտումներն անպայմանորեն չեն հանգեցնում FAPE-ի մերժմանը: Այն խնդիրների դեպքում, երբ ընթացակարգային խախտում է վկայակոչվում, լսման պաշտոնյան կարող է պարզել, որ Ձեր երեխան FAPE չի ստացել միայն եթե՝
(1) Ընթացակարգային խախտումը խոչընդոտել է երեխայի՝ FAPE-ի իրավունքը, (2) զգալիորեն խանգարել է Ձեր հնարավորությանը՝ մասնակցելու IEP գործընթացին և (3) կրթական օգուտից զրկվելու պատճառ է դարձել:

Պատշաճ գործընթացի լսումը պետք է անցկացվի և գրավոր որոշումը պետք է տրամադրվի բոլոր կողմերին՝ լուծման երեսուն (30) օրը լրանալուց հետո քառասունհինգ (45) օրվա ընթացքում, եթե լսման պատասխանատուն կողմերից մեկի խնդրանքով ժամանակը չերկարացնի: Պատշաճ գործընթացի լսմանը Դուք և համայնքը իրավունք ունեք՝

- Արդար և անկողմնակալ վարչական լսման, որը կանցկացվի այնպիսի անձնավորության կողմից, որ քաջատեղյակ է հատուկ կրթությունը և վարչական լսումների կառավարող օրենքներից.
- Տեղեկացված լինել մյուս կողմի խնդիրներից և առաջարկվող լուծում(ներ)ից՝ լսումից առնվազն տաս (10) օրացուցային օր առաջ.
- Մյուս կողմի փաստաբանի ներկայացուցչի կողմից ծանուցում ստանալ՝ լսումից առնվազն տաս (10) օր առաջ.
- Մյուս կողմից ստանալ բոլոր փաստաթղթերի պատճենները, որոնք լսման ժամանակ պետք է օգտագործվեն մյուս կողմից, ներառյալ որևէ գնահատում և վկաների ցանկ, որտեղ նշված է նրանց վկայության ընդհանուր ոլորտը՝ լսումից առնվազն հինգ (5) աշխատանքային օր առաջ (ժամանակին փաստաթղթերը չներկայացնելը կարող է հանգեցնել փաստաթղթերի բացառմանը).
- Միասին լինել կամ խորհուրդ ստանալ փաստաբանից.
- Վկայության գրավոր և բանավոր փաստարկներ ներկայացնել.
- Դիմակայել, խաչաձև հարցաքննել և պահանջել, որպեսզի վկաները ներկա լինեն.
- Փաստերի և որոշումների մասին գրավոր կամ էլեկտրոնային պատճեն ստանալ.
- Լսման գրավոր կամ էլեկտրոնային արձանագրությունը ձեռք բերել (ծնողների համար անվճար է):

Բացի այդ, Դուք իրավունք ունեք խնդրել, որպեսզի լսումը հանրությանը բաց կամ փակ լինի, Ձեր երեխային Ձեզ հետ բերեք լսմանը և տրամադրված թարգմանիչ ունենաք:

Լսման պատասխանատուների որոշումները պարտադրի են բոլոր կողմերի համար, բայց կարող են բողոքարկվել նահանգային կամ դաշնային դատարանում՝ վերջնական որոշումից հետո ինսուն (90) օրվա ընթացքում: Եթե Դուք որոշման իշխող կողմն եք, Ձեզ կարող են փաստաբանների հիմնավորված վճարումներ տրվել՝ կամ համայնքի հետ ունեցած համաձայնագրով կամ դատարանով: Եթե Դուք իշխող կողմ չեք, դատարանը կարող է համայնքին տալ դրա փաստաբանների վճարումը՝ Ձեր փաստաբանի դեմ, եթե պատշաճ գործընթացի գանգատարկումը անլուրջ, չարդարացված կամ անհիմն համարվի: Դատարանը նաև կարող է համայնքին շնորհել դրա փաստաբանների վճարումը՝ Ձեր փաստաբանի դեմ, եթե պատշաճ գործընթացի գանգատարկումը ներկայացվել կամ պահպանվել է որևէ անտեղի նպատակի համար, ինչպիսին է՝

անհանգստացնելու, անտեղի հետաձգում առաջացնելու համար կամ անտեղի ավելացնելու դատարավարության գինը:

Աշակերտի տեղավորումը պատշաճ գործընթացի վարույթի ընթացքում

Բացի որոշակի այլընտրանքային կրթական տեղավորման դեպքերից (*տե՛ս* այս ուղեցույցի «Տեղեկություններ կարգապահության մասին» բաժինը), պատշաճ գործընթացի լսման միջոցով տարաձայնությունը լուծելու գործընթացի ընթացքում Ձեր երեխան կմնա իր ներկայիս դպրոցում և կստանա այն ծառայությունները, որոնք նա ստանում էր պատշաճ գործընթացի նախաձեռման ժամանակ, եթե Դուք և համայնքը այլ պայմանավորվածություն ձեռք չբերեք: Եթե տարաձայնության մեջ առկա է հանրային դպրոց ընդունվելու նախնական դիմում, Ձեր երեխան՝ Ձեր համաձայնությամբ, կտեղավորվի հանրային դպրոցի ծրագրում՝ մինչև որ վարույթն ամբողջությամբ ավարտվի:

Եթե գանգատարկման գործում աշակերտ է ներառված, ով IDEA-ի (0-3 տարեկան) Part C-ի ծառայություններից տեղափոխվում է Part B (3-22 տարեկան), և ով այլևս իրավունակ չէ Part C ծառայությունների համար, որովհետև երեխայի երեք տարին լրացել է, ապա համայնքից չի պահանջվում տրամադրել Part C ծառայությունները, որոնք երեխան ստացել է: Ավելի ճիշտ, պատշաճ գործընթացի վարույթի ընթացքում համայնքից պահանջվում է տրամադրել հատուկ կրթության և դրան առնչվող այդ ծառայությունները, որոնք առաջարկված են աշակերտի IEP-ում և որոնք վեճի առարկա չեն:

Բողոք ներկայացնելու Ձեր իրավունքը

Բողոքարկման միասնական ընթացակարգերն այն ընթացակարգերն են, որոնք օգտագործվում են լուծելու այն բողոքները, որոնք վերաբերում են հատուկ կրթության օրենքի խախտմանը: Տեղական բողոքների համար գոյություն ունեն ընթացակարգեր, որոնք ներկայացվում են համայնքին և ընթացակարգեր՝ նահանգային բողոքների համար, որոնք ներկայացվում են Կալիֆորնիայի կրթության նախարարությանը:

Տեղական բողոքներ

Եթե կարծում եք, որ համայնքը խախտել է հատուկ կրթության ծրագրերը կառավարող դաշնային կամ նահանգային օրենքները կամ կանոնակարգերը, Դուք կարող եք բողոք ներկայացնել հետևյալ հասցեով՝

Director/Compliance Officer
Los Angeles Unified School District
Educational Equity Compliance
333 South Beaudry Avenue, 20th Floor
Los Angeles, CA 90017

Եթե ցանկանաք, այս գրասենյակը կարող է օգնել Ձեզ՝ գրելու Ձեր բողոքը: Բողոքները պետք է արվեն տեղի ունեցած խախտումից հետո վեց (6) ամսվա ընթացքում: Երբ որ Ձեր բողոքն ստացվի, համայնքը վաթսուն (60) օր կունենա՝ հետաքննելու և լուծելու բողոքը, եթե Դուք ժամանակի երկարաձգման համաձայնություն ձեռք չբերեք:

Եթե Դուք համաձայն չլինեք բողոքի լուծման հետ, Դուք կարող եք բողոքարկել որոշումը Կալիֆորնիայի կրթության նախարարությանը կամ քաղաքացիական օրենքի դատապաշտպանության միջոցներ խնդրել՝համայնքի գրավոր որոշումն ստանալուց հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում: Եթե բողոքում առկա է հաշմանդամության վրա

հիմնված խտրականություն, այն կարելի է գանգատարկել համայնքի կրթական հավասարության համապատասխանության գրասենյակին: Բոլոր բողոքները պետք է ներառեն գանգատարկման բնօրինակի և համայնքի որոշման պատճենը:

Նահանգային բողոքներ

Տեղական բողոքի փոխարեն, Դուք կարող եք ուղղակիորեն բողոք ներկայացնել Կալիֆորնիայի կրթության նախարարությանը: CDE-ն կմիջամտի, եթե Ձեր բողոքում հաստատվում է, որ՝

- Հատուկ կրթությունը կառավարող դաշնային օրենքի խախտում է տեղի ունեցել.
- Ձեր երեխան ծառայություններ չի ստանում, ինչպես սահմանված է նրա IEP-ում.
- Ձեր երեխան կամ երեխաների խումբն անմիջական ֆիզիկական վտանգի տակ են կամ նրանց առողջությունը, ապահովությունը կամ բարեկեցությունը վտանգված է.
- Համայնքը չի համապատասխանել կամ մերժել է համապատասխանել դաշնային և նահանգային պատշաճ գործընթացի ընթացակարգերին կամ մերժել է իրականացնել պատշաճ գործընթացի լսման վճիռը.
- Համայնքից բացի այլ հանրային գործակալություն չի համապատասխանել կամ մերժել է համապատասխանել օրենքին կամ կանոնակարգերին, որոնք վերաբերում են հատուկ կրթության տրամադրմանը, կամ
- Համայնքը չի հետևել տեղական բողոքների

ընթացակարգերին:

Դուք կարող եք Ձեր գրավոր և ստորագրված բողոքն ուղարկել

հետևյալ հասցեով՝

Procedural Safeguards Referral Service
Special Education Division
California Department of Education
1430 N. Street, Suite 2401
Sacramento, CA 95814

Երբ որ Ձեր բողոքն ստացվի, CDE- ն կհետաքննի այն և վաթսուն (60) օրվա ընթացքում Ձեզ գրավոր որոշում կտրամադրի, եթե հանգամանքները երկարաձգում չթույլատրեն: CDE-ի գրավոր որոշմանը վաթսուն (60) օր սպասելու այլընտրանք է կամավոր կերպով ներգարվվել համայնքի վեճերի այլընտրանքային լուծման (ADR) գործընթացում, որը աջակցվում և ճանաչված է CDE-ի կողմից: ADR գործընթացի նպատակն է արագ կերպով լուծել բողոքը:

Ձեր բողոքի լուծումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում CDE-ից կկապվեն Ձեզ հետ՝ հաստատելու Ձեր բողոքի բարեհաջող լուծումը: Եթե Դուք բավարարված չեք տրված լուծմանը, Դուք կարող եք գանգատ ներկայացնել Միացյալ Նահանգների կրթության նախարարություն:

Եթե CDE –ին բողոք ներկայացնելու համար լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեք, կարող եք զանգահարել CDE-ի Որակի երաշխավորման բաժին՝ (800) 926-0648 հեռախոսահամարով:

Եթե համայնքի՝ վերաճերի այլընտրանքային լուծման (ADR) գործընթացի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեք, խնդրում ենք դիմել՝

Educational Equity Compliance Office
333 South Beaudry Avenue, 20th Floor
Los Angeles, CA 90017
Phone: 213 241-7682
Fax: 213 241-3312

Ձեր երեխայի՝ խտրականությունից և հետապնդումից պաշտպանված լինելու իրավունքը

Լոս Անջելեսի միավորված դպրոցական համայնքը հավատարիմ է տրամադրելու աշխատանքային և ուսումնական միջավայր, որը զերծ է անհատի սեռի, սեռական կողմնորոշման, գենդերի, էթնիկ խմբի ճանաչման, ռասայի, նախնիների, ազգային ծագման, կրոնի, գույնի կամ մտավոր ու ֆիզիկական հաշմանդամության վրա հիմնված խտրականությունից և հետապնդումից, կամ որևէ այլ հիմքով, որը պաշտպանված է դաշնային, նահանգային, տեղական օրենքով, հրամանգրով կամ կանոնակարգմամբ: Հաշմանդամ (մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն) ամերիկացիների մասին օրենքի վերնագիր IX (սեռ), վերնագիր VI (ռասա, գույն և ազգային ծագում) և 504 հոդվածի ու վերնագիր II-ի համաձայն հետապնդումը անօրինական խտրականության ձև է, որը չի հանդուրժվի համայնքի կողմից: Հետապնդումը ահաբեկում կամ չարաշահող վարքագիծ է աշակերտի/աշխատակցի հանդեպ, որը թշնամական միջավայր է ստեղծում և կարող է հանգեցնել վիրավորող աշակերտի կամ աշխատակցի դեմ կարգապահական գործողության: Հետապնդող վարքը կարող է մի քանի ձևեր ունենալ, այդ թվում բառերով արտահայտված գործողություններ և անունով կանչել, գրաֆիկական և գրավոր ձևակերպումներ կամ վարք, որը ֆիզիկապես վախեցնող կամ նվաստացնող է:

Այս՝ ոչ-խտրական քաղաքականությունը ներառում է համայնքային ծրագրերի կամ գործողությունների ընդունում կամ օգտագործում, վարվելակերպ կամ աշխատանք, ներառյալ մասնագիտական կրթությունը: Անգլերեն լեզվի հմտությունների պակասը արգելք չի լինի՝ համայնքի ծրագրերում և գործողություններում ընդունվելու կամ մասնակցելու համար:

Անօրինական խտրականության/հետապնդման, անտեղի վարքի և/կամ ատելության հիմքով հանցագործությունների այլ ձևերի արգելման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է ձեռք բերել համայնքի այլ քաղաքականություններում, որոնք մատչելի են բոլոր դպրոցներում և գրասենյակներում: Համայնքի նպատակն է, որպեսզի բոլոր նման քաղաքականությունները հետևողականորեն կարդացվեն՝ անօրինական խտրականության պաշտպանության ամենաբարձր մակարդակ տրամադրելու՝ կրթական ծառայությունների և հնարավորությունների տրամադրմամբ:

Բոլոր աշխատակիցները իրենց աշխատանքի ողջ ընթացքում պետք է իրենց դրսևորեն այնպիսի բառերով, շարժումներով, գործողություններով և վարվելակերպով, որպեսզի երաշխավորեն որ բոլոր աշակերտներին արդար և անկողմնակալ վերաբերմունք է ցուցաբերվում: Խտրականության/հետապնդման որևէ ձև, որը դրսևորվում է աշակերտների հանդեպ՝ նրանց հաշմանդամության պատճառով, անընդունելի, անքաղաքավարի է և չպետք է հանդուրժվի: Այս քաղաքականության որևէ խախում կհետաքննվի և կենթարկվի կարգապահական գործողության:

Համայնքի բոլոր բաժինները, գրասենյակները և մասնաճյուղերն առանձին պարտականություններ ունեն՝ այս քաղաքականությունը գործադրելու, որը կառավարվում

է կրթական խորհրդի և կառավարչի կողմից:

Գործադիր անձնակազմը, վարիչները, բոլոր բաժինները, տեղական համայնքները և տեղական դպրոցների վարիչները պատասխանատու են այս քաղաքականության գործադրման համար:

Համայնքը արգելում է հատուցումն այն անձի հանդեպ, ով բողոք է ներկայացնում կամ մասնակցում է բողոքի հետաքննմանը: Համայնքի ոչ-խտրական քաղաքականությանը վերաբերող որևէ հարցաքննում կամ խտրականության/հետապնդման բողոքի ներկայացում կարող է ուղարկվել հետևյալ հասցեով՝

Educational Equity Compliance Office
Los Angeles Unified School District
333 South Beaudry Avenue, 20th Floor
Los Angeles, CA 90017
Հեռախոս՝ (213) 241-7682

Հաշմանդամության վրա հիմնված հետապնդումը ահաբեկում կամ կոպիտ վերաբերմունք է աշակերտի հանդեպ՝ հիմնված նրա հաշմանդամության վրա, որը թշնամական միջավայր է ստեղծում, որը խանգարում կամ արգելում է աշակերտի մասնակցությանը համայնքային ծրագրերին կամ գործողություններին կամ դրանցից օգուտ ստանալուն: Հետապնդող վարքագիղը կարող է տրաբեր ձևերով լինել, ներառյալ բառային գործողություններ կամ անունը տալը, ինչպես նաև ոչ բառային վարքագիծ, ինչպիսիք են գրաֆիկական կամ գրավոր ձևակերպումները, կամ վարք, որը ֆիզիկապես ահաբեկող, վնասակար կամ նվաստացնող է: Անօրինական խտրականության մակարդակի հասնելու համար վարքը պետք է անցանկալի, ծանր կամ համատարած, անհիմն կերպով քայքայի անձի կրթական կամ աշխատանքային միջավայրը կամ պետք է կրթական և աշխատանքային թշնամական միջավայր ստեղծի:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱՎՈՐ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԱՌԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՈՒՂԵԳՐԻ

Համայնքից չի պահանջվում վճարել մասնավոր դպրոցի կրթության համար, այդ թվում հաշմանդամ երեխայի հատուկ կրթության ծառայությունների համար, եթե համայնքը երեխայի համար համայնքային դպրոցում մատչելի է դարձրել հատուկ կրթության համապատասխան ծառայությունները, բայց Դուք որոշել եք Ձեր երեխան մասնավոր դպրոց կամ հաստատություն տեղավորել:

Եթե Ձեր երեխան նախկինում համայնքային դպրոցում հատուկ կրթության ծառայություններ է ստացել, և Դուք Ձեր երեխան ներառել եք մասնավոր դպրոց՝ առանց համայնքի համաձայնության կամ ուղեգրի, դատարանը կամ պատշաճ գործընթացի պատասխանատուն կարող է պահանջել, որ համայնքը փոխհատուցի ծնողներին մասնավոր դպրոց տեղադրումը, եթե համայնքը ժամանակին հատուկ կրթության համապատասխան ծառայությունները մատչելի չի դարձրել երեխային՝ նախքան երեխայի մասնավոր դպրոց ընդունվելը:

Փոխհատուցումը կարող է կրճատվել կամ մերժվել, եթե Դուք համայնքին չեք ծանուցել, որ՝

- Դուք մերժել եք համայնքի տեղադրումը.
- Որոնք էին տեղադրման առնչվող Ձեր մտահոգությունները, և

- Ձեր մտադրությունը՝ Ձեր երեխային մասնավոր դպրոց ուղարկելու և համայնքից փոխհատուցում պահանջելու մասին:

Դուք պետք է այս ծանուցումը տրամադրեք IEP թիմին՝ IEP հանդիպման ժամանակ՝ նախքան Ձեր երեխային պետական դպրոցից հանելը կամ պետք է ծանուցումը համայնքին ներկայացնեք՝ պետական դպրոցից Ձեր երեխային հանելուց առնվազն տաս (10) օր առաջ:

Փոխհատուցումը կարող է կրճատվել կամ մերժվել, եթե նախքան Ձեր երեխան մասնավոր դպրոց տեղափոխելը, համայնքը համապատասխանաբար երեխայի ծնողներին ծանուցել է, որ մտադիր է գնահատել երեխային, սակայն ծնողները իրենց երեխայի նման գնահատում չեն թույլատրել: Դատարանը նույնպես կարող է նվազեցնել կամ մերժել փոխհատուցումը, եթե պարզվի, որ ծնողների գործողությունները անհիմն են եղել:

Փոխհատուցումը չի կրճատվի կամ մերժվի ծանուցում չտրամադրելու պատճառով, եթե Դուք անգրագետ եք և չեք կարող գրել անգլերեն լեզվով, ծանուցումը տրամադրելը կարող է հանգեցնել երեխայի ֆիզիկական կամ զգացմունքային լուրջ վնասի, կամ դպրոցը խանգարում է, որպեսզի Դուք ծանուցում տրամադրեք:

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակնկալվում է, որ հաշմանդամ աշակերտները հետևեն համայնքի *«Ծնողների և աշակերտների ձեռնարկ»*-ում նշված վարվեցողության կանոններին: Դուք պետք է վարվեցողության կանոնները վերանայեք Ձեր երեխայի հետ, որպեսզի նա տեղյակ լինի, թե ինչ վարքագիծ է ակնկալվում դպրոցում: Եթե Ձեր երեխան վարքագծային խնդիրներ ունի դպրոցում, կամ Դուք կամ դպրոցի անձնակազմը կարող եք IEP թիմի հանիպում խնդրել՝ քննարկելու համապատասխան ուսուցումը, վարքագծային աջակցության մեթոդները և/կամ վարքագծային օժանդակությունները, որոնք կարող են օգնել՝ բարելավելու Ձեր երեխայի վարքագիծը: Եթե վարքագծային խնդիրը լուրջ է, Դոք կամ դպրոցի անձնակազմը կարող եք վարքագծի գործառնական գնահատում (FBA) խնդրել: FBA-ից ստացված նոր տեղեկությունները կարող են օգտագործվել՝ ստեղծելու կամ փոփոխելու վարքագծի աջակցման ծրագիրը:

Դպրոցի անձնակազմը կարող է աշակերտի վարվելակերպի կանոնները խախտած հաշմանդամ երեխային իր ներկայիս տեղադրումից համապատասխան միջանկյալ այլընտրանքային կրթական միջավայր (IAES), մեկ այլ միջավայր տեղափոխել կամ ժամանակավոր դադարեցնել հաճախումը՝ ոչ ավելի քան տաս (10) ուսումնական օր: Եթե դպրոցի անձնակազմը տեղադրման փոփոխություն է առաջարկում (օրինակ՝ դադարեցում, IAES կամ հեռացում, որը տաս (10) օրից ավելի կտևի), հնարավորինս շուտ IEP թիմի հանդիպում պետք է անցկացվի, բայց ոչ ուշ, քան 10 ուսումնական օրվա ընթացքում՝ որոշելու, թե արդյոք վարքագիծը, որը պատճառ է դարձել դպրոցի վարվելակերպի կանոնների խախտման, երեխայի հաշմանդամության դրսևորումն է եղել: IDEA-ի համաձայն, երեխայի վարքը նրա հաշմանդամության դրսևորումն է, եթե՝ (1) վարքը առաջացել է կամ ուղղակի և էականորեն կապված է երեխայի հաշմանդամության հետ կամ (2) վարքը համայնքի կողմից երեխայի IEP-ն չիրականացնելու ուղղակի արդյունքն է:

Եթե IEP թիմը որոշի, որ վարքագիծը երեխայի հաշմանդամության դրսևորում չէ, ապա դպրոցը կարող է երեխային կարգապահական տույժի ենթարկել այն նույն ձևով, ինչպես այն կարգապահական տույժի կենթարկեր ոչ հաշմանդամ երեխաներին: Եթե կարգապահական տույժը տեղավորման փոփոխություն է ներառում, ապա նոր տեղավորումը կորոշվի IEP

թիմի կողմից: Նոր վայրում երեխան կշարունակի կրթական ծառայություններ ստանալ, որոնք նրան թույլ կտան շարունակելու մասնակցել հանրակրթական ուսումնական ծրագրին և զարգանալ՝ հասնելու իր IEP-ի նպատակներին: Երեխան նաև կարող է վարքագծի գործառնական գնահատում, վարքագծային միջամտության ծառայություններ և փոփոխություններ ունենալ, ինչպես հարմար է, որպեսզի խնդրո առարկա վարքը նորից տեղի չունենա:

Դպրոցի անձնակազմը կարող է աշակերտին հեռացնել IAES՝ ոչ ավելի քան քառասունհիգ (45) ուսումնական օր՝ անկախ նրանից, թե վարքագիծը երեխայի հաշմանդամության դրսևորում է եղել, այն դեպքերում, երբ աշակերտը զենք է կրում կամ զենք ունի, գիտակցաբար անօրինական թմրանյութեր է կրում կամ ունի, վաճառում կամ միջնորդում է վերահսկվող թմրանյութերի վաճառքը, կամ դպրոցում եղած ժամանակ կամ դպրոցի տարածքում լուրջ մարմնական վնասվածք է պատճառում մեկ այլ անձնավորության: Նման դեպքերում IAES-ը կորոշվի երեխայի IEP թիմի կողմից: Եթե վարքագիծը զենք, անօրինական թմրանյութեր կամ լուրջ մարմնական վնասվածք չի պարունակում, համայնքը կարող է լսում պահանջել, եթե կարծում է, որ ներկայիս տեղավորումը պահպանելը էականորեն հավանական է, որ կհանգեցնի երեխայի կամ այլոց մարմնական վնասվածքի: Նման լսմանը որոշում կայացնելիս լսման պատասխանատուն կարող է տեղավորման փոփոխություն կարգադրել համապատասխան IAES՝ ոչ ավելի քան քառասունհինգ (45) ուսումնական օրով:

Եթե համաձայն չեք՝ (1)որևէ որոշման հետ, որը վերաբերում է տեղադրմանը, որն առաջացել կամ հետևել է կարգապահական գործողությունից/գործողությանը, կամ (2) դրսևորման որոշման հետ, Դուք կարող եք պատշաճ գործընթացի արագացված լսում խնդրել՝ բողոքելու որոշման դեմ: Արագացված լսումների ժամանակացույցերն ավելի արագ են, քան պատշաճ գործընթացի ոչ-արագացված վարույթներինը: Արագացված լսում անցկացնելու ժամանակացույցը քսան (20) ուսումնական օր է՝ լսման խնդրանքը կատարելուց հետո, իսկ լսման պատասխանատուն պետք է լսումից հետո տաս (10) ուսումնական օրվա ընթացքում որոշում կայացնի: Արագացված լսման վարույթի ժամանակ Ձեր երեխան մնում է IAES-ում, եթե Դուք և համայնքն այլ կերպ չեք համաձայնել: IAES-ում եղած ժամանակ երեխան կշարունակի կրթական ծառայություններ ստանալ, որպեսզի հնարավորություն ունենա մասնակցել հանրակրթական ուսումնական ծրագրին և զարգանա՝ հասնելու իր IEP-ի նպատակներին:

Պաշտպանության միջոցներ այն երեխաների համար, ովքեր դեռ հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների համար իրավունակ չեն

Եթե երեխան, որը իրավունակ չի համարվել հատուկ կրթության և առնչվող ծառայությունների համար, խախտել է աշակերտի վարքագծի կանոնները, բայց համայնքը նախքան խնդրի առաջանալը նախապես տեղյակ է եղել, որ երեխան հաշմանդամություն ունեցել և կարող է հաստատել վերը նշված պաշտպանության միջոցներից օրևէ մեկը: Ենթադրվում է, որ համայնքը տեղյակ է երեխայի հաշմանդամությունից, նախքան վարքագծի դրսևորումը, եթե՝

1. Ծնողը գրավոր կերպով մտահոգություն է հայտնել համայնքի վարչական անձնակազմին կամ երեխայի ուսուցչին, որ երեխան հատուկ կրթության և առնչվող ծառայությունների կարիք ունի.
2. Ծնողը հատուկ կրթության գնահատում է խնդրել, կամ
3. Երեխայի ուսուցիչը կամ համայնքի այլ անձնակազմ վարչական անձնակազմին իրենց մտահոգությունն են արտահայտել երեխայի կողմից դրսևորված վարքի առնչությամբ:

Ենթադրվում է, որ համայնքը տեղյակ չի եղել, թե արդյոք երեխայի ծնողը գնահատում թույլատրել կամ մերժել է հատուկ կրթության ծառայությունները: Ենթադրվում է նաև, որ համայնքը տեղյակ չի եղել, թե արդյոք երեխան գնահատվել է և իրավունակ չի համարվել հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների համար կամ եթե ծնողը չեղարկել է հատուկ կրթության և դրան առնչվող ծառայությունների շարունակվող տրամադրման համաձայնությունը: Նման դեպքերում, համայնքը կարող է կարգապահական տույժի ենթարկել աշակերտին այն նույն ձևով, ինչպես դա կաներ ոչ-հաշմանդամ երեխաների հետ:

Եթե գնահատման խնդրանքն արվել է այն ժամանակ, երբ երեխան կարգապահական տույժի է ենթարկվել, համայնքը գնահատումը կանցկացնի արագացված ձևով: Մինչև որ գնահատումն ավարտվի, երեխան կմնա այն կրթական տեղավորման մեջ, որը որոշվել է դպրոցի պատասխանատուների կողմից, որը կարող է ժամանակավոր դադարեցում կամ հեռացում ներառել: Եթե որոշվել է, որ երեխան իրավունակ է՝ IDEA-ի համաձայն, համայնքից պահանջվում է հատուկ կրթություն և դրան առնչվող ծառայություններ տրամադրել և հավատարիմ մնալ ընթացակարգային երաշխիքներին, որոնք սահմանված են այս ուղեցույցում:

Զեկուցում հանցագործությունների մասին

IDEA-ն չի արգելում համայնքին կամ դրա անձնակազմին՝ համապատասխան մարմիններին զեկուցելու այն հանցագործությունների մասին, որոնք կատարել է հաշմանդամ երեխան:Եվ ոչ էլ այն արգելում է օրենքի պարտադիր կիրառումը ապահովող դատական մարմիններին՝ կատարել օրենքով սահմանված իրենց պարտավորությունները: Եթե համայնքը զեկուցում է հաշմանդամ երեխայի կողմից իրականացված հանցագործության մասին, համայնքը պետք է երաշխավորի, որ երեխայի հատուկ կրթության և ուղղիչ արձանագրությունների պատճենները քննարկման նպատակով փոխանցված են համապատասխան մարմիններին:

ՓՈԽԱՆՈՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երեխայի իրավունքները պաշտպանելու համար, համայնքը պետք է որոշի, թե արդյոք նա փոխանորդ ծնողի կարիք ունի, և եթե հարմար է, փոխանորդ ծնող նշանակի, երբ՝

- Ոչ մի ծնող կամ խնամակալ հնարավոր չէ ճանաչել.
- Համայնքը, պատշաճ ջանքերից հետո, չի կարողանում ծնող կամ խնամակալ գտնել,
- Երեխան նահանգի խնամակալության տակ է.
- Դատարանը զգալիորեն սահմանափակել է ծնողի կամ խնամակալի կրթական որոշումներ կայացնելու իրավունքը.
- Երիտասարդն անտուն է և ծնողի կամ խնամակալի ֆիզիկական խնամքի տակ չի գտնվում:

Համայնքը պետք է երաշխավորի, որ այն անձը, ով ընտրվել է՝ փոխանորդ ծնող լինելու համար, շահ չունի այն հարցերում, որը հակասում է երեխայի այն շահերին, որը նա ներկայացնում է: Բացի այդ, ընտրված անձը պետք է տեղյակ լինի և հմտություններ ունենա՝ երեխային համապատասխանաբար ներկայացնելու համար:

Փոխանորդ ծնողը կարող է համայնքի կողմից աշխատանքի ընդունված չլինի: Անձը կարող է համայնքի կողմից աշխատանքի չընդունվել լոկ այն պատճառով, որ նա վարձատրվում է համայնքի կողմից՝ որպես փոխանորդ ծնող ծառայելու համար:

Փոխանորդ ծնողը կարող է երեխային ներկայացնել այն հարցերում, որոնք առնչվում են ինքնությանը, գնահատմանը, ուսուցման պլանավորմանը և զարգացմանը, IEP-ի վերանայմանը և ստուգմանը, և այլ հարցերում, որոնք առնչվում են երեխայի հատուկ կրթության ծառայություններին: Փոխանորդ ծնողը կարող է ստորագրել ցանկացած

համաձայնություն, որը վերաբերում է հատուկ կրթության գործընթացին և նպատակներին:

Փոխանորդ ծնողը անվնաս կնկատվի Կալիֆորնիայի նահանգի կողմից, երբ գործի ի պաշտոնէ, բացառությամբ ցոփ, անխոհեմ կամ վնասակար գործողությունների կամ բացթողումների դեպքում:

ՀԱՃԱԽԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

APE Adapted Physical Education

(Հարմարեցված ֆիզիկական կրթություն)

ASL American Sign Language

(Ամերիկյան ժեստերի լեզու)

AT Assistive Technology

(Աջակցող տեխնոլոգիա)

BSP Behavior Support Plan

(Վարքագծի աջակցող ծրագիր)

CAC Community Advisory Committee

(Համայնքի խորհրդատվական հանձնախումբ)

CDE California Department of Education

(Կալիֆորնիայի կրթության նախարարություն)

DIS Designated Instruction and Services (Related Services)

Նախանշված ուսուցում և ծառայություններ (առնչվող ծառայություններ)

ESY Extended School Year

(Երկարաձգված ուսումնական տարի)

FAPE Free Appropriate Public Education

(Համապատասխան անվճար պետական կրթություն)

504 Section 504 of the Rehabilitation Act of 1973

(1973թ. վերականգնողական օրենքի 504 հոդվածը)

IDEA The Individuals with Disabilities Education Act

(Հաշմանդամ անձանց մասին կրթության օրենքը)

IEE Independent Educational Evaluation

(Անկախ կրթական գնահատում)

IEP Individualized Education Program

(Անհատականացված կրթական ծրագիր)

ITP Individual Transition Plan

(Անհատական փոխադրման ծրագիր)

LAUSD Los Angeles Unified School District

(Լոս Անջելեսի միավորված դպրոցական համայնք)

LRE Least Restrictive Environment

(Նվազ սահմանափակ միջավայր)

LEP Limited English Proficient

(Անգլերենի սահմանափակ իմացություն)

NPA Nonpublic Agency

(Ոչ պետական գործակալություն)

NPS Nonpublic School

(Ոչ պետական դպրոց)

OCR Office for Civil Rights

(Քաղաքացիական իրավունքների գրասենյակ)

OT Occupational Therapy

(Օկուպացիոն թերապիա)

PT Physical Therapy

(Ֆիզիոթերապիա)

RSP Resource Specialist Program

(Ռեսուրսային մասնագետի ծրագիր)

SDP Special Day Program

(Հատուկ օրվա ծրագիր)

SSPT Student Support and Progress Team

(Աշակերտի օժանդակության և առաջընթացի թիմ)

Այս ուղեցույցը մատչելի է հետևյալ լեզուներով՝

Հայերեն	Չինարեն
Անգլերեն	Կորեերեն
Ռուսերեն	Իսպաներեն
Տագալոգ	Վիետնամերեն
Պարսկերեն	

Առնչվող գրքույկներ, որոնք մատչելի են Ձեր տեղական դպրոցում

- *Are You Puzzled By Your Child's Special Needs? (Դուք շփոթվա՞ծ եք Ձեր երեխայի հատուկ կարիքների պատճառով»)*
- *The IEP and You («IEP-ն և Դուք»)*
- *The ITP and You («ITP-ն և Դուք»)*
- *Least Restrictive Environment (LRE) («Նվազ սահմանափակ միջավայր»)*
- *Section 504 and Students with Disabilities («Հոդված 504-ը և հաշմանդամ երեխաները»)*
- *School Family Support Services (SFSS) («Դպրոց ընտանիք օժանդակության ծառայություններ»)*
- *Uniform Complaint Procedures («Միավորված գանգատարկման ընթացակարգեր»)*

Այլ տեղեկատվական ռեսուրսներ

Եթե հատուկ կրթության մասին հավելյալ տեղեկատվության կարիք ունեք կամ հավելյալ հարցեր ունեք Ձեր երեխայի կրթության վերաբերյալ, կարող եք դիմել՝

- Ձեր երեխայի ուսուցչին
- Ձեր երեխայի դպրոցի տնօրենին

Հատուկ կրթության բաժին
(213) 241-6701
http://achieve.lausd.net/sped